


1662-1668

17 1234

---

4-64












17

ԳՈՐԾՆԱԿԱՆ

ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԻՒՆ




ԹԱՐԴՄԱՆԱԲՈՐ ՀԱՒԱԳԵՑ

ՄԻՀՐԱՆ ՍՐԵՄԵԱՆ



معارف نظارت جلیله سنک ۱۵۴۱ نومرولی رخصتنامه سیله  
طبع اولنمشدر.



Կ. ՊՈՂԻՍ

ՏՊԱԳՐ. ՆՇԱՆ Կ. ՊԷՐՊԷՐԵԱՆ


1893

37

9067 NH

6468-57





Ի Յ Ի Շ Ա Տ Ա Կ

ՎԱՂԱՄԵՌԻԿ ՅՕՐ ԻՄՈՅ

# ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԱՂԱ ԱՐԱՄԵԱՆԻ

Հայրապետ որդին  
ՄԻՀՐԱՆ ԱՐԱՄԵԱՆ

1893 Մարտ 1

Ի Կ. Պոլիս




## ՅԱՌԱՋԱԲԱՆ ԹԱՐԳՄԱՆՁԻՆ

Ի Գաղղիականէ Թարգմանուած սոյն բարոյալից մանրավէպերն՝ որ Փունջ շաբաթամերթի մէջ կը հրատարակուէր, այս անգամ հաւաքելով զայնս՝ կազմեցինք մի գիրք «Բարոյագիտութիւն Գործնական» անուամբ. վասն զի ընթերցողը նորա մէջ սիրահարական նախադասութեանց հանդիպելու փոխան՝ ամէն տողի մէջ բարոյականի վսեմութիւնը պիտի գտնէ. եւ կարծեմ, սոյն օգտաշահ գրքոյկը ընտանեկան ամէն խաւերուն մէջ ընդունելութիւն պիտի գտնէ. մանաւանդ ծնողք, կարծեմ չեմ սխալիր եթէ ըսեմ՝ թէ մեծապէս կրնան օգտուիլ տալով անոնցմէ հատ մը իւրեանց զաւակաց. եթէ կր փափաքին նոցա բարեբարոյութեան, բարեգործութեան եւ առաքինութեան գործնական դաս մը տալ:

Կը յուսամ, որ մեր սոյն փոքրիկ աշխատութիւնն ըստ արժանւոյն կը գնահատուի ազնիւ ընթերցողաց կողմանէ:

Մ. Ա.





## ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԻՒՆ

## ԱՊԵՐԱԽՏԻՆ ՎԱԽՃԱՆԸ

Նանդի մէջ երբեմն կար ընտանիք մը ազնիւ եւ առաքինի . իւր համեստ աշխատութեամբ կը հայթայթէր օրական ապրուստն : Մոյն բարի ընտանիքն ունեցաւ մի ազնիկ զաւակ , որոյ համար մեծ հոգ կը տանէր , մանաւանդ մայրը՝ նկատելով որ ի բնէ հպարտ է նա , գիշեր ու ցերեկ կը խրատէր և կ'աշխատէր հաստատել ի նա հեղութեան օգին :

— Որդեա՛կ իմ , կըսէր մայրը , մեր ծնողական պարտականութիւնն է քեզ բարոյական կեանք տալ , լաւ ապագայ մը պատրաստել եւ գիտութեան լուսով վառել միտքդ . կը յորդորեմ զքեզ որ այդ սնտոի հպարտութիւնդ ի բաց թողուս , զի սոսկմամբ կը նախատեսեմ ա՛յն ապագայ մեծ կորուստը , զոր կրնաս ունենալ այդ ընթացքով :

Ս.մէն մայրական օգտալից յորդորք ու խրատք անլսելի կը լինէին այդ ինքնահաւան ազջըկէն , վասն զի՝ ինչպէս ըսինք՝ ի բնէ հպարտութեան

չար ոգին տիրած էր նորա սրտին մէջ: Մինչեւ տասն եւ երկու տարեկան հասակն՝ ծնողական պաշտպանութեան քղանցից ներքեւ ապրեցաւ: Մայրը մտածելով որ իւրեանց խոնարհ խրճի մէջ անկարելի է գիտութիւն և բարեբարոյութիւն ուսուցանել, պատշաճագոյն դատեց վարժարան դնել զնա: Բաւական ժամանակ աշխատելով յաջողեցան վերջապէս մեծ կողմնակցութիւն մը գանել, և նշանաւոր վարժարանաց՝ միոյն մէջ իբրեւ աշակերտուհի հաստատել զնա: Առաքինի կիներ իւր ձեռօք յանձնեց աղջիկը վարժարանին տեսչուհւոյն, և վերջին անգամ քաղցրութեամբ դարձաւ ըսաւ որդւոյն:

— Աղջիկա, ահա՛ այսուհետեւ մայրդ այս մեծարոյ կիներն է որ պաշտօն ունի բոլոր աշակերտուհեաց վերայ հսկել և խնամել իբրեւ մայր: Հընազանդ եղիր միշտ, աստ պիտի չամբուի քեզ ուսման և գիտութեան հացն, այս սրբավայրը պիտի դիեցնէ զքեզ բարեբարոյութեան կաթով, ի մի բան: Այս հաստատութեան մէջ պիտի պատրաստես ապագայդ: Որդեակ իմ, կը խրատեմ որ մենէ բաժնուելով չմոռնաս երբէք ծննդավայրդ և ծնողքդ, որ այնքան ժամանակ իւրեանց ծոցին մէջ դիեցուցին և սնուցին զքեզ: Յետ այս մայրական խրատուց՝ թողուց անդ աղջիկն և վերադարձաւ ի տուն:

Մի քանի տարի մնաց աղջիկն ի վարժարան, անդ հաստատուելէ քիչ ժամանակ վերջը մեռաւ խեղճ հայրն, և այրի ու միայնակ մնաց կիներն:

այնուհետեւ թէպէտ աւելի բազմապատկեցաւ  
կնոջ մտահոգութիւնն և դժուարացաւ ապրուս-  
տի միջոցը, բայց ամէն նեղութիւն յանձն կառ-  
նոյր առ սէր որդւոյն: Յաճախ կերթար դպրոց,  
և կոչելով զաւակն՝ կը խրատէր միշտ, զի կըզ-  
գայր թէ տակաւին եւս կը գտնուի այն ընթա-  
ցից մէջ, որ շատ հակառակ էր իրեն: Հպարտու-  
թիւնը մինչեւ այն աստիճան արմատացած էր  
աղջկան սրտին մէջ որ մինչեւ իսկ մօրն հեա տե-  
սակցիլ չէր ուզեր. որովհետեւ հէք կինն համեստ  
բնավորութիւն ունենալուն համար կարեւորու-  
թիւն չէր ընծայեր բնաւ փառասիրութեան՝ աղ-  
ջիկը կուզէր որ մայրն իւր ընկերուհեաց մարց  
նման լաւ արդ ու զարդով երթայ ի վարժարան,  
քանզի գիւղական պարզ զգեստներն նախատինք  
կը համարէր. չէր գիտեր թէ զաւակ մը պարտի  
յարգել ծնողքն ո՛չ թէ նորա արտաքին տեսքին,  
հարստութեան և ընչից, այլ այն բարոյական վը-  
սեմութեան համար, որով նոքա արժանացած են  
ծնողք կոչուելու:

— Որդեա՛կ իմ, կըսէր մայրն՝ մի՛ դուցէ առ  
Աստուած և առ ծնողդ ատերախտ գտնուիս.  
յիչէ՛ որ Նախախնամութիւնը կը փշրէ այն գը-  
լուխը որ կը հպարտանայ. բնաջինջ կընէ յիշա-  
տակն այն մարդոյ, որ գոռոզութեան թեւեր  
բացած կը թռչի մարդկութեան մէջ: Աշխարհի  
ամէն հարստութիւն և պերճութիւն ընդունայն  
են. այսօր հարուստ եղողն ի վաղիւ կաղքատա-  
այ, լաւ ի միտ առ թէ փառքէ և հարստութենէ

աւելի յարդելի են առաքինութիւն ու հեզութիւն:

Սակայն ինքնահաւան ազջիկը միշտ առ ոչինչ կը համարէր այս մայրական գեղեցիկ ու պիտանի յարդորներն ու խրատներն: Վարժարանին տեսչուհին ամէն ժամանակ պատուով կընդունէր և կը մեծարէր բարի կիներն, և յոյս կուտար թէ ազջիկը պիտի կրնայ ապագայ մը կազմել. մեծ գովեստներով կը խօսէր նորա վերայ, որովհետև կարի յոյժ ուսումնասէր լինելով՝ քիչ ժամանակի մէջ համակրելի և սիրելի հանդիսացաւ առաջի բոլոր դասատուաց և դաստիարակաց. գերազանցեց իւր շատ մը ընկերուհիներն, այնպէս որ ամէն ժամանակ դավինիներով կը վարձատրէին զինքն իւր յառաջդիմութեան համար, զոր կընէր շնորհիւ աշխատութեան: Սւա՞ղ որ դիւսաւոր բան մը կը պակսէր, այն է հեզութիւն: Խեղճ մայրը պաշտօնէից խօսքերէն կը խաբուէր միշտ և կը կարծէր թէ ուսումն թերեւս ազնուացուցած է նորա սիրտը: Թշուա՞ռ կին. միթէ հարստութիւն՝ մեծութիւն, իմաստութիւն, գիտութիւն կարո՞ղ են ազնուացունել սիրտերն.— ոչ երբէք. մարդ կրնայ լինել ուսումնական կամ հարուստ, բայց չկրնար ոյգու լինիլ բարեկիրթ, պարկեշտ, մարդավար, ազնիւ և բարի: Տակաւ կը մօտենային այն վայրկեաններն, յորում ազջիկն պարտէր թողուլ վարժարանը. բայց այդչափ ատեններ հանգստեամբ ապրած և շարունակ փայլուն սրբակներէ չլացած լինելով՝ դժուարութիւն կըզ-



գայր հրաժարիլ այդ պերճութիւններէն և մըտնել իւր մօր բնական խոնարհ խրճիթն, ուր տիրած էր պարզութիւնն: Արդարեւ մայրը ցաւով կը նկատէր որդւոյն այդչափ ապերախտութիւնն. նա որ բազում տարիներ իւր մայրական ծոցին վերայ դիեցոյց, և կրեց այնչափ նեղութիւն, սառապանք, ցաւ և վիշտ. ի՞նչ սոսկալի ապերախտութիւն. այդչափ բարութեանց փոխարէն, մինչեւ իսկ անձնազուհութեան փոխան, առաթուր կոխել զայն՝ սոսկալի ոճիր է ընդդէմ նախախնամութեան:

— Ո՛հ, ի՞նչ պիտի ընեմ, կըսէր նա ինքնին, ահա՛ աւարտեցի վարժարանին ընթացքն. աւա՛ղ, նորա (մօրն) հետ ի՞նչպէս ժամանակ պիտի անցընեմ. որ ո՛չ ինձ մտիկ կընէ և ո՛չ ալ ըսածս կը հասկնայ. պիտի համարձակի՞մ նորա հետ դուրս ելնել. — ո՛չ, ո՛չ, ի՞նչպէս պիտի կարենամ ընդունիլ հիւրերս այդ անպիտան յարկին մէջ. ի՞նչ պիտի ընեմ այն կնոջ հետ որ տարաբախտաբար մայրս եղեր է. ա՛հ, կը տառապիմ չարաչար. անհանդուրժելի պիտի լինի վիճակս. ս՛վ Նրկինք, ի՞նչու համար մեծ ընտանեաց մը զաւակը չըրիր զիս:

Կը տեսնէ՞ք, կը նախաատէ այն վայրն՝ ուր անցուցած է մանկութիւնը. կարհամարհէ այն էակն որ ծնողն եղած է և որ ի լոյս աշխարհի բերած է զինքն: Անխոհեմ աղջիկը կը գանգատէր իւր ճակատագրի դէմ: Եւ ահա՛ յանկարծ երկու բազուկներ զնա սեղմեցին խանդաղատանօք, մայրն էր որ եկած էր ծանուցանել թէ՛ ա-

մէն ինչ պատրաստ է ընդունելու համար զինքն :

— Սիրելիս, ըստ մեր կարողութեան՝ պատրաստած եմ քեզ համար սենեակ մը, ուր պիտի կրնաք հանգիստ լինիլ :

..

Հետեւեալ օրը դարձեալ գնաց մայրն ի վարժարան : Ազձիկն բաժանման հրատեշտ տալով դաստիարակաց ու ուսուցչաց, մօրն հետ գնաց անդր, ուր ապրիլ տանջանք մ'էր իրեն : Թշուառ կինը չէր գիտեր թէ ի՞նչպէս պատուէ ու մեծարէ զորդին . ճշմարիտն ըսելով՝ պարզապէս ծառայ մը եղած էր որդւոյն : Կնոջ ուրախութիւնը շատ քիչ տեւեց . չարասիրտ ազձիկն օր ըստ օրէ կը սաստկացնէր նախատինքները մօրը դէմ, բայց նա միշտ կը համբերէր, ի սրտէ սաստիկ կը ցաւէր և արտասուաց խոշոր կաթիլներ կը հոսէին աչերէն : Քիչ ժամանակ վերջը կինը տաժանելի հիւանդութեամբ անկողնոյ կը մատնուի . կը կոչուի բժիշկը և կը յայտարարէ թէ այլ եւս ապրելուն յոյս չկայ : Խեղճ կինը մահուան ճգնաժամուն մէջ քովը կը կոչէ ապերախտ որդին և կըսէ .

— Անարժա՛ն որդեակ, մուացար իմ անչափ բարութիւններս . չընծայեցիր ինձ որդիական յարգ ու պատիւ . ապերախտութիւնդ ա՛յնչափ եղաւ . նախատանաց ապտակացդ տակ հեծեցի . այս ալ բաւական չհամարելով՝ մահուան բաժակը մատուցիր ինձ . չեմ ուզեր անիծել քեզ, վասն զի

մայրական սիրտս չթողլատրեր, այլ կը թողում  
Սասուծոյ: Թող նա լինի մեր դատախազը:

Այս խօսքերն արտասանեց, հազորդեցաւ և  
աւանդեց հոգին:

Անցան տարիներ, հասաւ աղջկան ամուսնու-  
թեան ժամանակն: Ծանօթները միանալով՝ աշ-  
խատեցան և ամուսնացուցին զնա երիտասարդի  
մը հետ: Բաւական ժամանակ անցնելէ ետքը ու-  
նեցաւ չափահաս աղջիկ մը, որ կատարեալ պա-  
սուհաս մ'էր ծնողացն: Ուզեցին ծնողքն դաս-  
տիարակել զնա, դրին վարժարան, բայց անա-  
ռակ զաւակը չպսակեց նոցա փափաքն. ի զուր  
վատնուեցան ա'յնչափ ջանքեր, աղջիկն հրաժա-  
րեցաւ ուսման ասպարեղէն: Ի վերջոյ ամուսինն  
թշնամացաւ իւր դէմ, և աղջիկն ալ հօրն համա-  
միտ լինելով՝ միացաւ նորա հետ, և սկսաւ կը-  
ռուփներու և նախատանաց ներքեւ նեղել. ի  
զուր կը ճգնէր նոցա սիրտը գրաւել. ամէն օր  
հառաչելով կը հիւժէր ապերախտը, ցաւոց ժա-  
մուց մէջ միշտ կը յիշէր զմայրն՝ որոյ դագաղն  
ինքն իւր ձեռօք պատրաստած էր. ա'յնչափ մե-  
ծագորով ծնողի մը:

— Ո՛հ, մայր իմ, կըսէր, ձեր դէմ ըրած ա-  
պերախտութեանս ճշմարիտ հատուցումն է որ  
կընդունիմ արդ. ես չա՛տ անգթօրէն վարուեցայ  
քեզ դէմ. չճանչցայ յարգն ա'յն ամէն բարու-  
թեանց, զորս շուայլաբար կընծայէիր ինձ մայ-  
րական անհուն գթով: Ո՛վ Սասուած, վրիժա-  
ռու Տէ՛ր, կը բաւեն ա'յսչափ տառապանք և նե-

ղութիւնք . ա՛ռ հոգիս . որպէս զի ազատիմ շոյա :  
Նախախնամութիւնը չմոռցաւ երբէք առաքինի  
կնոջ իրաւունքը . մայրը մահուան անկողնոյն մէջ  
ներած էր որդւոյն ըրած ապերախտութեանը ,  
բայց Երկինք ո՛չ երբէք : Չկարծէ մարդ թէ իւր  
ըրած վատութեան փոխարէն չընդունիր : Եղեր-  
նագործութեանց ամենասոսկալին է ծնողք նա-  
խատելն : Աստուած սոսկալի պատիժ սահմանած  
է զհայր և զմայր անարգողաց համար : Ուրեմն  
ամէն մարդ պարտի ամէն յարգ ու պատիւ ըն-  
ծայել ծնողաց , սիրով հնազանդիլ . նոցա ծերու-  
թեան դաւազանն լինիլ , ամէն հոգ ու խնամ տա-  
նիլ նոցա , չվշտացնել երբէք զնոսա : Նա որ կը  
կատարէ այս ամէն պարտականութիւններն , որ  
յերկնուստ գրուած են որդւոց վերայ , այնպիսին  
միշտ խաղաղ և անդորր կեանք կը վարէ և երկ-  
նային վարձատրութեան արժանի կը հանդիսանայ :



### ՀԱՅԱԳՈՐԾԻՆ ՈՐԳԻՆ

1792ի վերջերը Շալօն քաղաքի մէջ Փարիզացի  
ընտիր երիտասարդաց բազմութիւն մը խռնած  
էր , որպէս զի քննութեան բովէ անցնին՝ հրշէջ  
գնդի մարզանաց յատկացեալ նորահաստատ վար-  
ժարանի աշակերտելու համար : Գիտնական նա-

խարարն Լաբլաս կը նախագահէր քննութեանց : Այն ինչ նիստն սկսած էր, անմիջապէս սրահին դուռը մեզմիւ բացուեցաւ . երիտասարդ մը, փոքրահասակ հանճարոյ լոյսը կը փայլէր ճակտին վերայ . ծանր նայուածքով մը՝ երկչստութեամբ յառաջ անցաւ . կօշիկները փոշիով ծածկուած էին բոլորովին . ձախ բազկին ստակ բռնած էր ծրար մը, որոյ մէջ կը գտնուէին ուղեւորութեան պիտոյքը :

— Ի՞նչ կուղէք, բարեկամ, հարցուց Լաբլաս :

— Քննութենէ պիտի անցնիմ՝ վարժաբանն մտնելու համար, պատասխանեց պարկեշտ երիտասարդն : Ներկայ եղջերներն ամէնքն ալ սկսան ծիծաղիլ խեղճին վրան, որովհետեւ արտաքին երեւութէն դատելով՝ բան մը չէին յուսար անկէ : Պ . Լաբլաս սաստիկ բարկացաւ և հրամայեց ընել :

— Ի՞նչ է անունդ և ո՞ւրտի կուգաս :

— Անդուան Տրուօդ կը կոչուիմ, և Նանսիէ կուգամ :

— Նախ՝ պարտիք արձանագրել տալ անունդ և պէտք է որ սպասէք մինչեւ ձեր կարգը գայ :

Անդուան դէպի նստարանի մը ծայրը սպրդեցաւ, թեթեւ ծրարը դրաւ ոտքին ստակ, և առանց երիտասարդ բազմութեան հեղնական նայուածքներուն կարեւորութիւն ընծայելու՝ միշտ ուշադրութեամբ մտիկ ըրաւ աշակերտաց ուղղեալ ամէն հարցմանց : Երբ կարգն իրեն եկաւ, նախագահը կոչեց զնա սեղանին առջեւ . երիտա-

սարդը սրահին մէջէն անցաւ գնաց Պ. Լաբլասի մօտ՝ մտովի աղօթելով առ Աստուած որ իրեն օգնական և պաշտպան լինի :

Բնագիտութեան, քիմիաբանութեան, բնական պատմութեան և աստղաբաշխութեան վերայ նախագահին ըրած բոլոր հարցմանց միշտ արիաբար պատասխանեց, այնպէս որ Լաբլաս սքանչանալով երբ քիչ մը վերջը գնաց առ Նարոլէօն Ա. կայսրն, ըսաւ Նորին Վեհափառութեան .

— Տէ՛ր, եթէ կենացս մէջ ըրած ամէն քրննութեանցս աւելի լաւ պատասխաններ տուող մը տեսայ, այն ալ Ձեր զօրապետ կոմսին աջակից եղող Անդուան է :

Սոսկական մարդու մը որդի էր Անդուան : Խեղճը Նանսիէ եկած էր բայց ոչ ձիով այլոց պէս, այլ հետիոտն : Նորա ծննդավայրն էր Նանսի, ուր հայրն արհեստով հացագործ էր : Տասն և երկու անդամներէ բաղկացեալ ընտանեաց մը պէսն էր հայրը . բոլոր գիշերը կաշխատէր՝ շատ քիչ անգամ հանգիստ առնելով : Աշխատասէր և ուսումնասէր որդին առաւօտները կանուխ կելնէր և փռան բոցէն օգտուելով կը կարդար շարունակ, մինչ միւս կողմէ հացագործը՝ մերկաբազուկ և շնչասպառ՝ հայրական խրատներ կուզէր առ նա :

Քիչ օր վերջը Անդուան հրաւիրուեցաւ և ընդունուեցաւ ի վարժարան : Շուտով եղաւ առաջին գնդին երկրորդ տեղակալ և օր ըստ օրէ աւելի պատուոց արժանացաւ շնորհիւ այն քաջու-

Թեանց զորս կը գործէր բանակին մէջ : Առաքի-  
նի և լաւ կենցաղ մ'ունեցաւ . սիրելի և համակ-  
րելի եղաւ ամենուն՝ իւր խոնարհութեամբ :

1796ին, պատահմամբ ֆրանսուեցաւ հօրը ա-  
չերն, և ամիս մը ետքը բոլորովին զրկուեցաւ  
աչաց տեսութենէ : 1804ին, տասն տարի բացա-  
կայութենէ մը վերջը, իմացաւ որդին հօրը օր-  
հասական վիճակն, աճապարանօք գնաց ի Նան-  
սի, ամբողջ գիշերները հակեց հոգեվարքին սնա-  
րին քով, հոգալով նորա ամէն պէտքերը :

Հայրն արտասուաթոր աչօք կը գիտէր քաջ  
արուեստագէտը . վերջապէս ընտանիքը օրհնելէ  
ետքը, վերջին անգամ լինելով փայլուն աչքերը  
կը պարզէր սիրելի որդւոյն վերայ :


Այդ պարզ գործաւորն ինքզինքը շատ ուրախ  
կը զգայր, զի գիտէր թէ՛ իրմէ վերջը երեւելի  
զօրապետ մը կը թողաւ, բարի և առաքինի որ-  
դի, պարծանք և փառք իւր տոհմին : Սոյն քաջ-  
արի զօրապետն մեծ պատիւ և ընդունելութիւն  
գտաւ ո՛չ միայն Ժողովրդէն և ընկերներէն, այլ  
նոյն իսկ իւր վեհապետէն, սրովհետեւ ամէն բա-  
նակի մէջ յազթող կը հանդիսանար : Կայսրը ու-  
զելով վարձատրել զնա ըսաւ :

— Ահա՛, քեզ կուտամ երկու հարիւր հազար  
ֆրանք ի վարձատրութիւն քաջութեանցդ :

Մեծահռչակ զօրապետն մեռաւ 1847ի Մայիս  
27ին ի հասակի 73 ամաց : Արդարեւ նա որ ուս-  
ման, գիտութեան և միանգամայն բարոյակա-  
նութեան շաւղին մէջ կը մտնէ, անշուշտ կունե-

Է. 5. 8929

նայ փայլուն ապագայ մը, զի փառաց, մեծութեան և պատուոյ գահը նոցա մէջ հաստատուած է: Ահա՛ իւր ցնցոտիներով և սրտաճմլիկ կերպարանօք ամենուն ծիծաղներուն առարկայ եղող հէք տղայ մը՝ շնորհիւ աշխատութեան թողուց հռչակաւոր անուն մը աշխարհի մէջ:



### ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ ՂԱՐՁՔՆ

Իտալիոյ մէջ ժամանակաւ կար աղքատ ընտանիք մը: Առքա շա՛տ ուշ ամուսնացած լինելով՝ իւրեանց ամբողջ կենաց մէջ ունեցան աղջիկ զաւակ մը: Հէք զաւակն առջի օրէն սկսեալ ծընողացը նման մասնուեցաւ թշուառութեան ճիւղաններուն: Ա՛յն աստիճան խեղճ էին՝ որ մանկան ծննդեան օրը դժուարաւ կրցան գանել խանձարուր մը՝ աղեկին մարմինը ծածկելու համար: Սակայն այս տարապայման թշուառութեան մէջ խակ, մինչեւ այն ատեններ իւրեանց սխառուոյն աղարատ չէին բերած, նախամեծար կը համարէին չոր հացով ապրիլ բայց մեղօք չը բեռնաւորիլ: Սոյն առարկինի և պարկեշտ ընտանիքն սրբութեամբ կանցունէր իւր օրեր, ծովապահօթեամբ և աղօթիւք, բասբատանք, չարախօսութիւն չկային իւրեանց խոնարհ խորճիթին մէջ... սիրով և խաղաղութեամբ կապրէին միմեանց հետ. պար-



կեչաութիւնն և առաքինութիւնն, սրբութիւնն և ազնուութիւնն տիրած էին այս ընտանեկան յարկին մէջ :

Մեծափարթամ տիկնայք՝ որ փերեւեթեալ կը ճեմէին հրապարակին վերայ, կը հանդիպէին միշտ այս չուառ ընտանիքին՝ որոց այտերէն կը հոսէին թշուառութեան արտասուաց շիթերն : Երբ այս խեղճ ընտանիքն մտանար նոցա, յետոյ յետոյ կը փախչէին այդ սիրամարդեալ կանայք, զի մի գուցէ պերճ քղանցքնին հպի նոցա ցընցտեաց : Ա՛հ, ս'ր աստիճան գոռոզութիւն, ինչ ծայրայեղ հպարտութիւն, ս'ր սիրտ կարող է հանդուրժել առ այն, ս'վ անմիտ և անգութ հարուստ, ինչո՞ւ հպարտանաս մեծութեամբդ, հարստութեամբ և անոտի փառասիրութեամբ : գիտցիր թէ՛ զգեառներդ, արդու զարդդ, պերճութիւնդ, փառքդ, նոյն իսկ անձդ ժամանակաց ժանեաց ներքեւ պիտի չքանան : Ուրեմն, ինչո՞ւ երես դարձնես թշուառէն, նոցա դառն արտասուքը սրբելու փոխան՝ աչեյի վիրաւորես նորա սիրաքը կոչաութեամբ և քաղաքութեամբ : Քաջ ի միտ առ թէ՛ աշխարհ, անիւ մ'է կամ՝ լաւ եւս է ըսել՝ ամեղուդք մ'է, ուսկից մին կիջնէ և միւսը կեղնէ . թերեւս գայ ժամանակ մը որ ոչ միայն զքեզ այլ և զաւակներդ իսկ բազդի ձախող հարստածը դահալիժէ ի վիճն թշուառութեան . ինչ պիտի ընես յայնժամ ոչ ինչ, միայն պիտի հառաչես, այլ ի զո՛ւր, զի ժամանակն անցած գացած, և իրր բաժին տխուր յիշատակ մը

Թողած է անցեալէն: Դու որ այսօր կարհամարեա աղքատն, ո՛ր գիտէ՝ պիտի գայ օր մը, որ դու ձեռք կարկառեա և անկէ խնդրես դու ուղարձութիւն. ուստի մի գուցէ խեթիւ նայիս թշուառին, և երկնից բարկութիւնը քու վրադ հրաւիրես:

Արդարեւ, քանի՛ քանինե՛ր կան արդի ժամանակիս մէջ, որ իւրեանց ստորնութիւն կը սեպեն աղքատի մը հետ տեսակցիլը. պատճա՞ռը վասն զի իրենք հարուստ, բայց դիմացիներն՝ չքաւոր է. ինքեանք պերճօրէն հագուած են, իսկ իւրեանց նմանն, ընկերն, եղբայրն աղքատութեան ցնցոտեաց տակ հեծող. բայց ինչ որ ալ լինի, պէտք է սիրել զնա, յարգել և ըստ կարի օգնել նմա. ջանալ ամօքել նորա վիշտերն. մխիթարել ցաւոցն մէջ: Ահա՛ այս է մարդոյ միակ և վսեմ պարտականութիւնն առ նմանիս:

Այդ հէք ընտանիքն իւր կենաց չըջանին մէջ ապրեցաւ խեղճութեամբ ու չքաւորութեամբ մինչեւ ցվաթման իւր կենաց: Սոցա միակ սիրտն էր, ուրախութիւնն ու յոյսն իւրեանց զաւակն էր: Շատ ժամանակներ կը լսուէին խեղճ մատաղ աղջկան անօթութեան օրաւճակիկ աղաղակներն.

— Մայրի՛կ, անօթի եմ, պատառ մը հաց ճարեցէք. ա՛հ, անօթի՞ պիտի մեռնիմ:

Բայց ինչ ընէին խեղճ ծնողքը, քանի որ անգութ բաղդին ձեռքը խաղալիք գարձած՝ կը տաղնապէին միշտ նոյն իսկ օրական չոր հացի մը հա-

մար, և շատ անգամ զայն իսկ չէին կրնար գըտնել: Հիւանդութիւնն ալ եկաւ ծանրացաւ և շատ անտանելի եղաւ վիճակնին. թէ՛ ազքատութիւնն և թէ՛ հիւանդութիւնն բոլորովին ընկճեցին զանոնք թշուառութեան լուծին ներքեւ: Խեղճերն չկրնալով ազատիլ, անկան մահուան գիրկն, իջան ի գերեզման և հէք ազջիկը մնաց անօգնական, անտէր ու անպաշտպան: Խեղճն ստիպուեցաւ հարստի մը քով իբր սպասուհի ծառայել, երբ գրեթէ հազիւ տասն և հինգ տարեկան կար. բայց քիչ ժամանակ ետքը տեսնելով որ վատասիրտ և անբարոյական տէրը կուզէ անպատուել զինքն, նախամեծար համարեցաւ մուրացութեամբ և պատուով ապրիլ քան թէ ժամանակ անցընել ճոխ ապարանքի մէջ և պատիւն աղարտել. ուստի հրաժարեցաւ այդ ճոխութիւններէն. և դէմքը ծածկելով դրնէ ի դուռ սկսաւ մուրալ: Բաւական ժամանակ այսպէս ապրեցաւ. այսինքն մէկ կողմէն կը մուրար, բայց միւս կողմէն յոյսը դրած էր բոլորովին Նախախնամութեան վերայ: Սորա կուսութեան պաշտպան կանգնած էր այրի խեղճ ծեր կին մը, զոր ազջիկը կը խընամէր առած ողորմութեամբն: Ունէր ազգական և բարեկամ, սակայն լոկ անուամբ: Արդէն մարդկային բարեկամութիւնն առ շահու է միշտ: Շատ քիչեր կը դտնուին, որք բառին բուն նշանակութեամբ լինին բարեկամ կամ ազգական: Մանաւանդ թշուառն բարեկամ չունենար. եթէ շուառես նոյն իսկ մօտակայ ազգականներդ՝ երբ հան-

գիւղին քեզ ճանապարհին վերայ, չտեսնելու կը զարնեն կամ անծանօթ կը ձեւանան:

Երբ օր մը փողոցէ մը կանցնէր խեղճ աղջիկը, պատահեցաւ սրիկայից չոկատի մը՝ որ հալածեցին զինքը փողոցէ փողոց: Թշուառ աղջիկն մինչ լալագին կը վազէր այսր անդր, ահա պատահեցաւ ալեխառն մարդու մը՝ որ օգնութեան հասնելով ազատեց զնա ստահակաց ձեռքէն: Երկար օրէն հարցաքննեց և աղջիկը մանրամասնաբար պատմեց գլխուն եկածներն: Մարդն զգաց անմիջապէս թէ՛ աղջիկը կեանքէ աւելի նախամեծար կը համարի պատիւն և նորա համար կամաւ մատնուած է այդ թշուառութեան: Ուստի առաւ զնա իւր բնակարանը տարաւ:

— Ո՛հ, պարո՛ն, ի՞նչ իրաւունք ունիք խառնուիլ մեզ, ո՛վ էք դուք, ո՛վ պաշտպան կանգնեց զձեզ նորա վերայ.

Սակայն վեհանձնութեամբ բնաւ կարեւորութիւն չառաւ այդ լկաի երիտասարդաց խօսից: Սոյն առաքինի և բարեօիրտ մարդը բաւական կարողութեան տէր մէկն էր. հարստութեամբ հանգերձ ունէր նաեւ մեծ համբաւ, բարի անուան: մեծ բարերար մ'էր. օր մը չէր անցըներ առանց բարեգործութեան. միշտ կը ջանար բարիք մը գործել. բոլոր աղքատաց հայրն եղած էր գրեթէ. բայց այս ամէն բարեգործութիւն ձեռաց տակ կը գործէր, և ո՛չ թէ սմանց պէս փոզեր գոռացնել կուտար:

— Տիկի՛ն, ըսաւ իւր կնոջ երբ տուն հասաւ,

ահա՛ քեզ բարի աղջիկ մը, խեղճի զաւակ, որը  
և թշուառ . յեա այսօրիկ դու պիտի լինիս սորա  
մայրը :

Տարաբաղդ աղջիկը նորա պաշտպանութեան  
ներքեւ ապրեցաւ բառական ժամանակ . և որով-  
հետեւ գեղանի օրիորդ մ'էր՝ հարուստ մէկը  
տեսնելով և հաւանելով՝ յամուսնութիւն խնդ-  
րեց, և քիչ ժամանակ վերջը հարսանեկան հան-  
գէսը տեղի ունեցաւ մեծաւ շքով :


. . .

Բաւական ատեն անցնելէ ետքը, բարերար  
մարդը կորոյս զկինն, և մնաց երկու անշնորհ  
զաւակներով որք կարճ միջոցի մը մէջ վասնեցին  
զեղխութեամբ և անառակութեամբ իւրեանց հօր  
ունեցած ամբողջ հարստութիւնն . ա՛յն աստիճան  
խեղճութեան մատուցեցաւ որ չդտաւ տեղ մը,  
ուր գլուխը հանգչեցնէ :

Երբ բարեսիրտ աղջիկը իմացաւ իւր բարե-  
րարին աղիողորմ կացութիւնը, սաստիկ յուզ-  
ուեցաւ և ազաչեց ամուսնոյն որ, զնա իւրեանց  
պաշտպանութեան և խնամոց ներքեւ առնուն,  
զի առաքինի ծերունին անտէր մնացած էր բո-  
լորովին : Սղնիւ և առաքինի աղջիկն անձամբ  
գնաց ի տուն թշուառ ծերունւոյն, և հրաւիրե-  
լով զնա՝ բերաւ իւր բնակարանը . խնամեց մե-  
ծաւ հոգածութեամբ, և միշտ կը հսկէր որ մի  
գուցէ փոքրիկ անհանգստութիւն մը իմանայ բա-  
րի ծերունին :

Ահա տե՛ս թէ առաքինութիւնը անվարձ չը մնար . երկինք վարձատրիչն է ամէն բարութեանց . բարեւէր մարդը պաշտպան կանգնած էր խեղճ աղջկան, ազատած էր զնա սրիկայից ձեռքէն, պատիւը պաշտպանած և մինչեւ վերջը խնամով սնուցած ու մեծցուցած, և ի վերջոյ դանելով յարմարագոյն և լաւ անձ մը՝ ամուսնացուցած ու կազմած էր ընտանիք մը : Այսչափ մեծ առաքինութեան փոխարէն վարձատրուեցաւ արժանաւորապէս, և իւր ծերութեան ժամանակ անդութ զաւակաց ձեռքէն տառապելու փոխան՝ հանգիստ և անդորր կեանք վարեց այդ աղնիւ աղջկան քով՝ որոյ համար առաւել քան զհայր աշխատած էր :

Ամէն ինչ կը կորսուի, բայց բարիք ոչ երբէք : Բարեգործութեան յիշատակք դարուց ի դարս արձագանք կուտան մարդոց սրտին : Առաքինութիւն և բարեգործութիւն կանմահացնեն զմարդ :



## ՓԻԼԻՍՈՓԱՅԻ ՄԸ ՇՐՋԱԳԱՅՈՒԹԻՒՆՆ

Աշնան վերաբեր և ցրտաշունչ գիշեր մը՝ միտքը խորհուրդներով պաշարուած փիլիսոփայ մը կեննէ շրջագայիլ . ժողովրդեան ամենէն աւելի անցուզարձ եղող տեղէն անցնելու ժամանակ, մթին անկեան մը մէջ կենալով՝ սրտակէզ տեսա-

րանի մը ականատես կը լինի: Սալայատակին վերայ ցնցոտեաց ներքեւ 7-8 տարեկան երկու հէք մանկիկներ կը նշմարէ. առնթեր նոցա երկու շուներ պարկած, ո՛չ այլ ոք ընկեր և օգնական չունէին խեղճերն:

Երկնից թագուհին՝ իւր փալիւռն դէմքով, կարծես՝ կը ծիծաղէր այդ թշուառաց վերայ, բայց ահա թխադոյն ամպերն յանկարծ ծածկեցին երկնից պայծառութիւնն. անձրեւն սկսաւ, մանկանց մին ազեկէզ ձայնիւ սա՛ խօսքերը կը կրկնէ «Թէ՛ նօթութի՛ւն թէ՛ ցո՛ւրտ և թէ՛ անձրեւ . . . . .» Ի նմին պահու կառք մը կանցնէր. նորա մէջ ցրտէն մուշտակներով պատսպարեալ անձինք՝ թշուառութեան մէջ հեծող հէք մանկանց գթութեան ակնարկ մը նետել չեն հաճիր զիջանիր:

Փիլիսոփայն ականատես լինելով այս տխուր իրողութեան՝ կազազակէ «Վազեցէ՛ք, վազեցէ՛ք, պատրաստ են ձեր փայփայուն և կակուղ անկողիններն: մի նայի՛ք տղմի վերայ և անձրեւոց ներքեւ հեծող այս տարաբաղճներուն. Ընչ կարելորութիւն ունի ձեզ համար. թերեւս նոցա տեսարանը վրդովէ ձեր քունը. այնպէս չէ՞, բայց մտածեցէք որ՝ անակնկալ պարագայ մը կրնայ ըզձեզ և ձեր զաւակներն ալ այդպիսի ցաւալի վիճակի մը ենթարկել:

Ո՛հ, այսպիսի փոքր մանկանց հետ ո՞րքան բարձր հանճարներ և տաղանդներ կը կորսուին. ո՛վ հարուստներ, մետաղի կտորներն ձեզ պար-

ձանք համարողներ, եթէ մարդոյ համար կայ պարծենալու համար բան մը, այն ալ իւր նմաններուն վերայ արգահատիլն է :

Քանի մը վայրկեան վերջը դէպ ի գերեզմանատուն տանող ճանապարհին վերայ մարդ մը կը նշմարուի, որոյ արտաքին երեւութէն կը մակաբերուէր թէ՛ միտքն իտրհրդոց ովկիանին մէջ խորասուզեալ է : Այդ անձը մեր փիլիսոփայն էր . անտի անցնելով գնաց գերեզմանի մը եզերքը նստաւ և սկսաւ մտածել : Ուժգին հովերէ արմատախիլ եղող ծառոց շառաչիւնը սոսկումն կը ափռէր ամէն ուրեր :

Յայնժամ ամպերն ցրուեցան և լուսինն իւր փայլուն դէմքով ի յայտ եկաւ, բայց դարձեալ չկրցաւ գերեզմանական սարսափն ի բաց տանիլ :

Փիլիսոփայն նշմարեց ոսկերաց շեղչակոյտ մը . աղաղակաւ ելաւ կանգնեցաւ և բացադանչեց սապէս . «Ո՛վ մարդիկ, եկէք և ցոյց տուէք թէ այս ոսկերաց ո՛րն է խեղճին և ո՛րն է հարուստինը, կամ ո՛րն է հանգիստ կեանք անցընողին և ո՛րն է դժբաղդիինը :

Ահա ի նկատի առնելով զայս՝ պարտ է խոյս տալ հպարտութենէ և գոռոզութենէ, և ջանալ առաքինութեամբ անմահանալու համար :



## ՀԱՏՈՒՅՈՒՄ ՄԸ

Բրիտանիոյ մէջ կար ծեր ընտանիք մը, որ թէև բարոյական կեանքէ զուրկ՝ բայց բարեսէր և ազնիւ էր: Պարոնն Հէրվալ իւր տոհմին յաջորդութիւնն ապահովելու համար կրկին ամուսնացած էր, թէպէս շատ ուշ: Մանկամարդ կիներ մեռած էր ամուսնութեան առաջին տարին, թողլով որդի մը: Պարոնն՝ այն ատեն վատուի դըղեակին կը բնակէր, Պրէտօնի եղերքին վերայ հաստատուած, ձկնորսաց գիւղի մը մէջ, որոյ խորճիթները տարին ութ ամիս ամայի կը մնային գրեթէ, զի ամէնքն ալ ձկնորսութեան կերթալին: Վեց տարիէ ի վեր Հէրվալ այսպէս կապրէր գրեթէ առանձին. միայն որդի մը ունէր, որոյ դատարակութեան համար մեծ հոգ կը տանէր:

Օր մը երբ հին մեծ սրահին մէջ սեղանի մը առջեւ նստած ձեռագիր մը կը թղթատէր, յանկարծ ուրախալի ձայն մը անզգակեց դրսէն.

— Հայր, հայր.

Պարոնն իսկոյն ելնելով, դնաց դէպ ի պատահանը, բացաւ զայն և նայեցաւ: Տեսաւ եօթը տարեկան տղայ մը, ազնուական և խոպոպեալ մազերով աղջկան մը պէս գեղեցիկ, որ շան մը հետ կը բօսնայր, վազվազելով այսր անդր: Ի տես սորա, Հէրվալի դաժան դէմքին վերայ ուրախութեան ժպիտ մը փայլեցաւ և խնամուտ ձայնիւ մը ըսաւ:

—Մի՛ վազեր այդչափ ուժով, Մնարէ՛, պիտի յոգնիս :

Տղան կանգ առաւ և իւր կապտագոյն գեղեցիկ աչերը դէպ ի պարոնն վերցնելով,

—Ո՛հ, հայր, Դոմ (շան անունն է) առաւ գնտակս և չուզէր զայն ինձ վերադարձնել :

Տղան դարձեալ սկսաւ հալածել շունը՝ նորա բերնէն գնտակը կորզելու համար : Հէրվալ պատուհանին մօտ կանգնած մտախորհ կը դիտէր զանոնք, և ահա ձայն մը կը հասնի ականջին :

—Ներումն, պարոն Հէրվա՛լ, ըսաւ ծառայ մը խոնարհելով, ժաղըլին է, հայր Հուտանի ընտանիքն, որ կը բաղձայ տեսակցիլ ձեր հետ :

Պարոնն՝ որ թշուառաց վերայ գթութեան ականարկ մը իսկ նետել չէր զիջանէր, կը մերժէ նորա առաջարկութիւնը բայց շտապաւ դուռը կը բացուի և կին մը ներս կը մտնէ գողգոջուն և ձեռքերը մածեալ .

—Ո՛հ, պարոն, կուզեմ որ պէտք եղածը խօսիմ ձեզ, ըսաւ հեծելով .

—Ո՛հ, պարոն Հէրվա՛լ, գթացէ՛ք տղուս, խեղճ փոքրիկ մանչուս . պիտի մեռնի եթէ զայն փրկելու համար չօգնէք ինձ . Չերմն ունի, 100 Քրանքի պէտք ունինք՝ քաղաքին բժիշկը բերելու համար, և մէք ոչինչ ունիմք . ո՛հ, վերստին պիտի հատուցանենք պարոն . կը տեսնէք որ ձախորդութիւն ունենալուս համար է որ կուզենք : Հայրը այլոց հետ չկրցաւ այս ձմեռ ձկնորսութեան երթալ . ապա որդեկին հիւանդութիւնը

վրայ հասաւ . ամէն ինչ սպառեցինք . գործը մընաց բժիշկին . նա միայն պիտի կարենայ ազատել զնա . բայց պէտք է որ շուտ հասնի . գլխացէ՛ք մեր վրայ , օգնութեան ձեռք կարկառեցէք մեզ . մենք պարկեշտ մարդիկ եմք , ձեր տուած դրամը կը հատուցանենք վերստին . բայց մի՛ թողուք որ մեռնի խեղճ փոքրիկ որդիս . չորս տարեկան է և շատ սիրուն . . . եթէ տեսած ըլլայիք զնա , անշուշտ ի գուժ պիտի խանդաղատէիք :

Կինը կը խօսէր հեղձամղձուկ ձայնիւ մը , թո՛թովելով և լալով իւրաքանչիւր բառին : Պարոն Հէրվալ կը դիտէր զկինն արհամարհոտ դէմքով մը և բնաւ կարեւորութիւն չէր ընծայէր կնոջ խօսքերուն : Ի նշան սրամտութեան՝ ուսերը վեր վերցուց և թեթեւութեամբ յետս յետս ընկրկեցաւ . սրովհետեւ թշուառ կինը բազկատարած կը մօտենար թա ինքն :

— Ի՞նչեցէ՛ք մեր անսչին , ըսաւ խոտիւ , և յետոյ դառնալով ծառային .

— Գալով ձեզ , Ժա՛ն , յարեց նա , եթէ անգամ մ՛ալ բանութեամբ դուռ բանաք ուրիշին , պիտի ճամբեմ զձեզ : Եւ վարագոյր մը բանալով , մերձակայ տենեակը դնաց :

Իժբաղդ կինն սաք ելնելով գողգոչուն և քինայոյզ ձայնիւ մը .

— Ո՛հ , եթէ որդեակս մեռնի , ամենաբարին Աստուած վրէժ պիտի լուծէ քենէ , ըսաւ :

Բ.

Հետեւեալ օրը, եկեղեցւոյ զանգակն հնչուեցաւ և խակոյն դազալ մը երեւեցաւ, որոյ շուրջ կը գտնուէին գիւղին ամբողջ կանայք, և մի քանի ծեր ձկնորսք կը հետեւէին նոցա, ախրութեամբ շարժելով իւրեանց գլուխներն: Ժագըլին ուզած էր իւր մանկան դազալին հետեւիլ մինչև գերեզմանատուն, գունատ շրթունքները սեղմած: Ամուսինը, հայր Հուտան, գլուխը նորակողմը ծռած էր. սիրտն աւերակ, աչերէն կըսկըծանաց արտօսը կը հոսէր: Կանայք՝ նոցա շուրջը ժողովեալ կը հծծէին միշտ: Երբ ամէն ինչ վերջացաւ, երբ աղեկը գերեզման դրուելով ծածկուեցաւ, ժագըլին յուսահատութեան վերջին աղաղակ մը արձակելով նետուեցաւ օրդւոյն անըզգայ հողակոյտին վերայ.

— Ո՛հ, խեղճ փոքրիկ տղաս, հեծեց նա, եթէ ուզուէր՝ գեռ եւս կապրէիր...:

Գ.

Ապրիլ ամսոյ մէջ գիւղը նոր կեանք մը առած էր. ամէն տեղէ ուրախութեան աղաղակներ կը բարձրանային. զուարթ մանկունք հեռուն ծովուն վերայ նաւակներով, առաջատանին բացած՝ մի-

ամեայ ձկնորսութենէ կը վերադառնային: Պարոն Հերվալ չէր գիտեր փոքրիկ Հուսէնի մահը, զի որդւոյն ուամամբ կաշխատէր: Ամէն առաւօտ հայրական ալեխառն գլուխը գրքին վերայ ծրուած՝ կը նայէր որդւոյն դասը: Կէս օրէն վերջը փոքրիկն Անարէ արածութիւն ունէր երթալ շըրջագայիլ ծովեզերքն, գիւղին տղոցոց հետ: Այդ օրը առանց ծառայից խմացներու՝ որոց պաշտպանութեան և հսկողութեան ներքեւ էր, գնացած էր գրօնուլ: Մայիսի առաջին օրը ձանձրանալով դղեակին մէջ մնալէ, հետը առերևով գրօմ՝ իջաւ ծովեզերք: Երկուքն ալ կը գրօնուին անդ աւազի հատիկներով: Բայց երկինք մթին էր, և ծովն ալէկսածեալ, գիւղին տղայք նշմարելով զայն, չէին եկած այդ օրը: Յայնժամ, ժամէ մը վերջը, փոքրիկն Անարէ՝ ձանձրանալով՝ բաժնուեցաւ շունէն. եզերքը կապուած նաւակ մը նշմարեց. ու լաւ գրօսանք մը պիտի լինէր իրեն: Նետուեցաւ գիւրաբեկ նաւակին մէջ, երբ բողմոցին վերայ լըսւմը հաստատուեցաւ, սկսաւ կոչել գրօմ: Բայց ընտիր շունը չէր փնտրուէր շուրէն, ծովնակին վերայ կերթեւեկէր կենդանին. կը նեղուէր տեսնելով իւր մատաղ տիրոջ հեռանալն, որովհետեւ նաւակն ալիքներէ շարժելով աւելի կը հեռանայր ծովափէն: Տղան բոլորովին տրախ և զուարթ կը զգայր ինքզինքն՝ ծովուն վերայ տատանելով: — Եկ տրեմն, Դօմ, եկ երկչո՛ւս, կը պօռայր: Շեղշակուտեալ ամպերն յանկարծ մթա-

գնեցին երկինքն . առաջին որոտումն օդը փա-  
րատեց և տեսարանը փոխուեցաւ : Տղան վախ-  
ցաւ . յիմարեալ վազելով նաւակին մէջ՝ անխո-  
հեմութեամբ կը ծռէր աջ ու ձախ , խեղճուկ  
ձայնիւ մը գոչելով « հայրի՛կ » . և շունը աղիողորմ  
կը կաղկանձէր :

Այդ միջոցին , երբ գլեակին մէջ Պարոն Հէր-  
վալ կաւարտէր իւր թղթակցութիւնը , քան զա-  
ռաջինն աւելի սաստիկ որոտման ձայն մը դողա-  
ցուց զնա : Երկար ժամանակ կար որ չէր լսած  
Անարէի ձայնն . այդ սրդիական անոյշ ձայնն էր  
որ կը հրճուեցնէր զինքը : Զանգակը զարկաւ .

— Ո՛ւր է սրդիա , հարցուց :

Ծառայն կակաղեց .

— Տէ՛ր , Անարէ հեռուն գնացեր է . գնացին  
փնտուել զնա :

— Հեռացած , ո՛ւր և ի՞նչպէս :

Մէկ վայրկենի մէջ , պարոնին հրամանին վե-  
րայ գլեակին և պարտէզին ամէն կողմն որոնե-  
ցին բայց թ՛քո՛ւր : Այն ատեն ծառայից մին գէպի  
գիւղն իջաւ , և պարոն Հէրվալ՝ նախազգացումէ  
մը յուզեալ՝ այլոց հետ ուղղեց քայլերն գէպի  
ծովն : Հաղիւ կը հասնէին ծովեզերքն , և ահա  
աղաղակ մը անձկութեան հառաջ մը կը հասնի  
իրենց :

— Անարէ՛ , Անարէ՛ , պօռաց Հէրվալ :

Բայց ո՛չ ոք պատասխանեց : Այլիք մը տապա-  
լած էր նաւակը , բերելով ջուրց վերայ նուազեալ  
տղուն մարմինը . . . . :

— Զաւա՛կս , զաւա՛կս , գոչեց պարոնը . խնդրելով տղուն ազատութիւնը . բայց մարդիկ ետ քաշուեցան :

— Ո՛հ , պարոն , յիմարութիւն մ՛է . ձեր սրդւոյն դիակը միայն պիտի գանէք : սպասեցէ՛ք հիմա կուգան : Արդարեւ բոլոր գիւղացիք կը հասնէին աղէտին վայրը՝ ականատես լինելու : Պարոն Հէրվալ եկողներուն կը դառնայր , և տղուն մարմինը ցոյց տալով՝

— Հարստութիւնս զայն ազատողին՝ պօռայ :

Բայց ոչ ոք միջամուխ եղաւ . ծառայները ո՛չ լողալ գիտէին և ո՛չ ալ թիավարել . ծեր ձկնորսները գլուխնին կը շարժէին . չէին համարձակեր դիմագրաւել , զի ծովը կատաղի էր , և նաւարկել՝ դժուարին : Պահ մը լուութիւն տիրեց . պարոնը կրկնեց յուսահատ .

— Հարստութիւնս՝ զնա ազատողին :

— Ստակի պէտք չկայ պարոն , ըսաւ յայնժամ՝ խոշոր ձայն մը , պիտի ազատեն զնա առանց բան մը պահանջելու . . . :

Հայր Հուտան՝ որ ուրիշներէ լուր առած էր , գիւղէն աճապարելով հասաւ անդր , և բազմութիւնը ճեղքելով քաջութեամբ յառաջ անցաւ : Պարոնն՝ այս անձնուիրութեան առջեւ ամօթահար՝ , յետս կոչելով իւր մերժումն յուզեալ սրտով մը :

— Հուտան , ըսաւ , կը հաճի՛ք ինձ տալ ձեռքդ :

Քաջ նաւաստին երկնցուց մասնները , բայց այն վայրկեանին , ուր պարոնն յառաջ կանցնէր զայնս

սեղմելու համար, կին մը նոցա մէջ ներտուեցաւ  
և կարծր ձայնիւ մը :

— Հուտան, դու իմ մարդս ես, ես գըբզ մի-  
այն ունիմ. դու իմ մերձաւորս ես. չեմ ուզեր  
որ այս մարդուն որդին ազատելու համար անձդ  
ի վտանգի դնես. արժանի չէ այդ բարութեան,  
քանի որ նա մեր որդւոյն մահուան պատճառ ե-  
ղաւ : Աստուած պատժեց նորա անդթութիւնը . . :

Ժաղըլին էր որ կարգելոյր ամուսնոյն՝ ի հա-  
տուցումն անդութ հարստին : Մօտը դանուող  
մարդիկ կը սոսկան կնոջ այդչափ երկարատեւ ու-  
խակալութեան վերայ : Հէրվալ զգեանեալ, ծը-  
ռեց գլուխը այս սխակալ մօր առջեւ, տղան կոր-  
սուած կը թուէր :

— Ժաղըլին, ըսաւ, պարտականութիւնս է,  
եւ եմ նորա միակ ազատարարն և ես պիտի ա-  
զատեմ զնա : Եւ խոյացաւ ընդ առաջ փրփրադէզ  
ալեաց :

Հազիւ վայրկեան մը տեւած էր այս տեսա-  
բանը. տղուն կորուստը ա՛յնչափ մօտալուտ էր և  
ա՛յնչափ ցաւ կը պատճառէր որ ամէնքը ծնկան  
վերայ եկած կաղաչէին քաջասիրտ նաւաստիին :  
Երեք անգամ հայր Հուտան յաղթուեցաւ ալիք-  
ներէն. երեք անգամ նուաճեց զայնս, քաջասրը-  
տութեամբ ըղալով միշտ դէպ ի տղան :

Հուտան ելաւ՝ մանուկը գրկացը մէջ. ուրա-  
խութեան ձայն մը բարձրացաւ. դրաւ տղան հօ-  
րը բաղկացը մէջ. յարգանքներով ողջունեցին  
զհայր Հուտան : Յետոյ մինչ փոքրիկն Անարէ բա-




ցաւ աչքերը, պարոնն Հէրվալ բազուկները երկարեց որդւոյն ազատարարին և բարձր ձայնով:

— Հուտա՛ն, ըսաւ, կուզէ՞ք այսուհետեւ մեր բարեկամն լինիլ: Չկնորսը ժպտեցաւ և հարստին ձեռքը սեղմելով.

— Սրգարեւ, այո՛. պարո՛ն, դրամէ աւելի նախամեծար կը համարիմ բարեկամութիւնդ:

— Օ՛ն անդր, մխիթարէ մեր կիներ. բարերար Աստուած վարձատրելու համար մեր այս ըրած բարիքն՝ ուրիշ մը պիտի տայ մեզ:

— Ս, յն ատեն, ըսաւ Հէրվալ, ձեր որդին իմ որդւոյս եղբայր պիտի լինի:



### ՏԱՐԱԲԱՂԴ ՄԱՅՐԸ

Ըստ հինաւուրց սովորութեան՝ գիւղացիք կը համախմբուէին ամէն տարի Ֆիօրէնցայի պարբայաց շուրջն, և անդ կը տօնէին իւրեանց գեղդկական մի տօնն: Յանկարծ ահռելի ձայն մը կը լսուի անտառին խորէն. ամբողջ բազմութիւնն կահարեկի, արք և կանայք, ծեր և տղայք, այլ յայլմէ եղած կը հարցնէին միմեանց:

— Ի՛նչ է այս ձայնն, ուստի՞ է ահագին գուռն:

Մինչ այս մինչ այն, ահա կը տեսնեն ի հե-

ուստ ստակալիթխար առիւծ մը , որ կուզուէր  
դէպ ի բազմութիւնն :

— Զաւակներս , կը պօռայր մին . միւս մը իւր  
կինը կը խնդրէր . ուրիշ մը իւր ծանօթը . վեր-  
ջապէս ամէնքն ալ կը ջանային փախչիլ՝ , յափըշ-  
տակելով իւրեանց սիրելիները : Խեղճ փոքրիկ  
մանկունք՝ ազիտզորմ աղաղակօք , իւրեանց ծնո-  
ղաց քղանցքներէն կախուած՝ ի փախուստ կա-  
ծապարէին . սակայն տարաբաղաբար մայր մը  
միայն մնացած էր անդ իւր զաւակով : Խեղճերն  
չէին կրցած փախչիլ : Առիւծը մօտեցաւ կնոջն .  
խեղճ մայրն՝ , յետս , յետս ընկրկելու փախան՝  
ինքն անձամբ ընդ առաջ կերթար արիւնարբու  
գազանին , զի խելքը կորուսած էր հէք կինը :

Ի՛նչ սրտակէզ տեսարան , ի՛նչ յուսահատա-  
տական վայրկեաններ . մայրը՝ զաւակը բազկացը  
մէջ՝ նետուեցաւ գազանին ճիրաններուն առջեւ ,  
մայրական ձեռօք , յանձնեց որդին գազանին պա-  
տառիչ մագլաց , և ինքն նորա առջեւ ինկած՝  
սրտակէզ հառաջներ կարձակէր : Կենդանին խա-  
ծած էր մանկան զգեստներէն , և կը նայէր միշտ  
նորա մօր :

— Աստուած իմ , ի՛նչ պիտի ընէ արդեօք զա-  
ւակս , պօռաց կինն . այսչափ ժամանակ դիեցու-  
ցի գրեզ , երկար գիշերներ քունը աչքերէս խըլ-  
ուած էր բոլորովին , շատ նեղութիւններ և տա-  
ռապանքներ կրեցի սիրոյդ համար . գրեզ այդ  
հասակդ հասուցի՝ գազանի մը ճիրանաց զօհե՞լու  
համար : Ո՛վ դու վայրագ կենդանի , նախ զիս

գիշատէ և ապա զաւակս, որպէս զի մայրական  
աչերս չտեսնէ որդւոյ մը մահը . գթա՛ եղկելուոյս ,  
խնայէ թշուառիս և մի՛ վնասեր մանկանս : Այս  
խօսքերն ըսելով խեղճ կինն՝ ինկաւ գետին դու-  
նատ , բազուկները տարածած՝ գրեթէ օրհասա-  
կան վիճակի մէջ :

Աստուած գթալով վերստին կը զարթուցանէ  
մայրական ա՛յն վսեմ՝ զգացումները , զորս քիչ մը  
զազրած էին . վերստին կը զգենու իւր քաջու-  
թիւնն ի սէր իւր մանկան . ծնկան վերայ կը շոգի  
գազանին առջեւ և ազեկէզ ձայնով մը կը պօ-  
ռայ .

— Տո՛ւր ինձ որդիս , ինձ վերադարձուր զա-  
ւակս :

Վայրագ առիւծն ա՛յնչափ կը յուզուի այդ  
աղաղակներէն որ , գլխիկօր , բոցալառ աչերը  
կը յարէ հէք մօր վերայ , և ուշի ուշով կը դիտէ  
զնա և վերջապէս ի դուժ կը խանդաղաափ , զի՛  
կարծես՝ կը զգար թէ մայր մ'է որ կարտասուէ  
և խոնարհութեամբ կը խնդրէ որդին . կը հաս-  
կընայ թէ մայր մ'է որ կը վշտանայ : Նախախնա-  
մութիւնն էր որ գթաց այդ հէք մօր վերայ ,  
Աստուած էր որ կապանք դրաւ կենդանւոյն բե-  
րանը նման Գանիէլի առիւծուց , որպէս զի չհպի  
անմեղ մանկան : Կենդանին՝ մանուկը ժանեացը  
մէջ բռնած՝ բառական դիտելէ վերջը դրաւ զնա  
մօրը բազկացը մէջ և սկսաւ հեռանալ : Մանուկը  
զուարթօրէն երկարեց փոքրիկ ձեռներն իւր մօր ,  
ժպտեցաւ և ուրախութեան ճիչ մը արձակեց .

մայրն առնըլով տղան՝ յամբաքայլ հեռացաւ ան-  
տառէն :

. . .

Հետեւեալ օրը , ապերախտ գիւղացիք՝ որ կը  
կարծէին թէ երկուքն ալ գիշատուած են , մե-  
ծապէս կը սքանչանան երբ կը տեսնեն կիներն ու  
որդին՝ ողջ առողջ և բոլորովին անվնաս . վայր-  
կեան մը աչաց խարէական երեւոյթ կը կարծեն ,  
բայց ի վերջոյ կը տեսնեն որ իրականութիւն մ'է :  
Տակաւ առ տակաւ հետաքրքիր արանց բազմու-  
թիւն մը կը խռնուի կնոջ քով՝ հարցնելու համար  
թէ՛ ի՞նչպէս կրցաւ ազատիլ .

— Ի՞նչ է այս , հրա՞շք գործեցիր , ապա թէ  
ոչ հրեշտակ մը յօգնութիւն հասաւ առ քեզ , ը-  
սին ումանք :

— Ի՞նչ կարծեցիք , ըսաւ կինը , աշխարհ կը  
լքանէ զմարդ , բայց Աստուած ոչ երբէք . դուք  
զիս ձգեցիք գազանին ձեռքն և վախաք , բայց  
երկնացին գթութիւնն ընկեր և պաշտպան եղաւ  
մեզ՝ ողորմելով անմեղ մանկանս :— Ամենքն նե-  
րումն կը խնդրեն կնոջմէն ա՛յն պակասութեան  
համար , զոր գործած էին :

Բնութիւնը պարտականութիւն դրած է մարդ-  
կութեան վերայ՝ օգնել միմեանց : Ամէն անհատ  
պարտք ունի օգնութեան ձեռք կարկառել իւր  
նմանին , երբ կը տեսնէ թէ նա վտանգի մը կամ  
նեղութեան մէջ կը գտնուի : Այն որ իւր պար-

տուց սահմանին մէջ չգտնուիր, կը մեղանչէ երկնից դէմ և կընդունի իւր արդար պատիժը:

ՈՒՍՈՒՄՆԱՍԷՐ ՏՂԱՅԻ ՎԱԽՃԱՆԷ

Գաղղիոյ նշանաւոր անձանց մին էր Վիլիամ Հիւթոն, թէպէտ և թշուառութեան մէջ ծնած: Խեղճ պահանօրդի մը զաւակն էր. հայրը կարի յոյժ դժուարութեամբ ընտանեացն օրապահիկը կը ճարէր: Ընտանիքն և միանգամայն աղնիւ զաւակը նորա յիմարութեան զոհերն էին: Աղքատ էր, բայց իւր տխմարութեամբ կը կրէր ամէն թրշուառութիւն, զի շահած օրականօվն ընտանեաց ապագայն ապահովելու փոխան, բազոսեան տաճարին կը զոհէր զայն և նոյն խկ անձը: Սորա բարի զաւակն երբ խորհեցաւ թէ հայրն իւրեանց ապագայն և ապրուստն հոգալու համար անփոյթ կը գտնուի, գնաց մտաւ գործարանի մը մէջ իբր աշակերտ: Հազիւ տասը տարեկան էր:

Սոյն հաստատութեան փոխ-տեսուչն՝ որ թէև հարուստ և ամէնուն ծանօթ, սակայն վայրենաբարոյ, անդութ և անբարոյական մէկը լինելով՝ շատ նեղութիւն կուտար բարեսիրտ տղուն: Ամէն օր կռուփներու և ապտակներու տակ կը հեծէր խեղճը:

Առաւօտ մը այն ինչ կ'սկսէր Վիլիամ աշխատիլ, ահա յանկարծ մեքենայի մը անուոց մէջ մը-

նալով ձեռներն վնասուեցան մեծապէս . արիւնը միշտ կը հոսէր ձեռաց պատուածներէն : Գործաւորք տեսնելով որ աղան վտանգի մէջ է . կառնուն տուն կը տանին : Հայրն ի տես նորա կը կատարի և իւր որդւոյն վերայ արգահատելու և դարման մը ընելու փոխան՝ գաւազանի սաստիկ հարուածներ կուտայ . Այսպիսի հայրեր շատ կը գտնուին աշխարհի մէջ , որովհետեւ այդպիսեաց վերայ կըթուծուին և դատախարակութիւնը իւրեանց բացակայութեամբ կը փայլին . ուստի միշտ անհող կը գտնուին իւրեանց որդւոց դատախարակութեան համար :

Վիլիամ՝ ապաքինելէ վերջը՝ վերստին յաճախեց գործատեղին մինչեւ տասն երկու տարեկան հասակն : Յայնժամ հայրը աղան իւր եղբոր քովը զրկեց աշխատիլ , ուր մնաց գրեթէ եօթը տարի շարունակ : Հօրեղբայրը Նօգէնկամի մէջ խոյրարար էր . բնաւորութեամբ շատ ցասկոտ . իսկ հօրաքայրը յետին ատիճան ազահ : Առաջինը կը հարուածեր և վերջինը նօթի կը պահէր յաճախ խեղճ աղան . մինչեւ իսկ շատ դժուարութեամբ ձեռք կը ձգէր հին հագուստ մը՝ մարմինը ցըրտէն պաշտպանելու համար :

Տասնեւեօթը տարեկան հասակին մէջ թողուց հօրեղբայրն , և քիչ մը պատրաստութիւն տեսնելով ճամբայ ելաւ դէպ ի Պիրմինկամ , կը յուսար գործ գտնել : Անդ բաւական ժամանակ իբրեւ դատարկաշրջիկ աստ անդ թափառեցաւ , և այնչափ նեղը մնաց մինչեւ որ սկսաւ դաշտերէն

վայրի շողգամ ժողովել և ուտել հացի տեղ :

Պիրմինկամէ՝ որ ազնիւ տղուն ծննդավայրն էր , չէր ուզէր բաժնուիլ . բայց հայրը բռնութեամբ վերստին զրկեց զնա իւր եղբօր քով , ուր անցուց գրեթէ եօթը տարիներ ալ : Այս անգամ առջինէն աւելի յարգ ընծայուեցաւ իրեն : Վիլիամ յաջորդաբար եղաւ թղթատար , կազմարար և գրավաճառ : Բայց այս անգամ սոյն վերջին արհեստին մէջ մնաց . նախ շրջուն գրավաճառ եղաւ , յետոյ վարձեց փոքրիկ խանութ մը . քիչ մը վերջը աւելի մեծցուց գործը . քիչ ժամանակամիջոցի մէջ թղթի և գրոց ընդարձակ վաճառատուն մը բացաւ , ուր ամէն օր կը կարդար ամէն ա՛յն գրքերը զորս կը վաճառէր : Այնատասէր սղան շնորհիւ իւր ուսումնասիրութեան ընդարձակ և զանազան գիտութիւններ ուսաւ եւ եղաւ ի վերջոյ բանասէր , պատմագիր , հնագէտ . բանաստեղծ . ունեցաւ զանազան երկասիրութիւններ , որք շատ գնահատուեցան . նոյնպէս երկու քերթուածներ՝ որք իւր տաղանդն և մեծ արժանիք ի հանդէս բերին :

Այս բարեկիրթ և ազնիւ սղան մեռաւ 1815 ին Պիրմինկամի մէջ , ի հասակի 92 ամաց : Այսպէս ահա՛ թշուառութեան ցնցոտիներու ներքեւ ապրող աննշան սղայ մը իւր ուսումնասիրութեամբ գերազանցեց հարուստի մարդոց զաւակներն , և եղաւ հարուստ ու նշանաւոր անձնաւորութիւն մը :



## ՀԱՒԱՏԱՐՄՈՒԹԵԱՆ ՄԸ ՎԱՐՁՔՆ

Բաւական տարիներ յառաջ Նանսի մէջ կապ-  
րէր աղքատ կողովագործ մը՝ իւր միակ որդւով :  
Կողովներ պատրաստելով՝ կը տանէին մերձակայ  
քաղաքներն և անդ կը վաճառէին . բայց այնքան  
աժան որ հայր և որդի հազիւ մէկ ֆրանք կը  
շահէին օրը : Իւրեանց աղքատութեան ու չքա-  
ւորութեան հակառակ՝ միշտ զուարթ և գոհ է-  
ին . նոցա դիմաց վերայ երբէք չէր նշմարուէր  
դժգոհութեան կամ թախծութեան նշան մը՝ որ  
երջանիկ համարուած մարդոց բազմաց ճակատուց  
վերայ կը տեսնուի : Խարուսիկ երազներ չէին  
վրդովեր նոցա խաղաղ քունը . կրօնի ճշմարիտ  
մարդիկ էին . հաւատոյ յոյսը կը ճառագայթէր  
այդ խոնարհ խրճիթին մէջ :

Ուղեւոր մը յանկարծ երեւան ելաւ գիշեր մը  
ո՛չ հեռի այն գիւղէն , ուր կը բնակէին Փիլիպ-  
պոս և իւր հայրը . տակաւ առ տակաւ մօտեցաւ  
խրճիթին , և տեսաւ որ աղօտ լոյս մը կը փայլի ,  
մեղմիւ կը զարնէ դուռն . ալեւոր ծեր մը կը  
ներկայանայ դուռը բանալու համար :

— Կը խնդրեմ , ըսաւ ուղեւորն , հաճիք մէկ  
քանի ժամու համար ապաստանարան մը շնորհել .  
գիշերը վերայ հասնելով՝ մնացի այս ամայու-  
թեան մէջ . անօթութենէ և ցրտէն կը մեռնիմ :

— Մտէ՛ք , պարս՛ն , մտէ՛ք , ըսաւ ծերունին



քաղցրութեամբ թէպէտ և ձեր ուղածին պէս չկայ լաւ և փափուկ անկողին, բայց կը բառէ որ ցրտէն չսառիք. մեք՝ ինչպէս կը տեսնէք, պարզ մարդիկ եմք, ինչպէս նաեւ մեր կերակուրն. և կարծեմ թէ հաճութեամբ պիտի մասնակցիք մեր համեստ ճաշին:

Զայս ըսելով՝ մարդասէր ծերունին, տղուն հետ, ըստ իւրեանց կարողութեան՝ պատրաստեցին գիւղական պարզ սեղանը. շարուեցան շուրջն, և քանի՛ երջանիկ կըլզային զիրենք՝ տեսնելով որ աղնիւ օտարական մը սեղանակից կը գտնուի իրենց: Մերունին դողդոջուն ձայնով ըսաւ.

— Տէ՛ր, ներեցէ՛ք, ձեր ճաշակին յարմար կերակուր չկայ մեր խոնարհ խրճիթին մէջ. եթէ ունենայի նիւթական կարողութիւն, անշուշտ այսպէս չէի վարուէր ձեզ հետ. ա՛յնչափ կարօտ եմ՝ որ ամբողջ ունեցածս ե՛ն այսօքիկ. եթէ կը հաճիք՝ հրամմեցէ՛ք:

— Բարի ծերունի՛, հիւրասիրութիւնը նիւթականի վերայ չէ. գիտեմ շատեր որք թէեւ ունին հարստութիւն, սակայն եթէ տեսնեն օտարական մը, ձեան վերայ տարածուած՝ օրհասական սրբատաճմկիկ վիճակի մէջ կը գտնուի, դարձեալ ի գութ չեն խանդաղատիր, և չեն զիջանիր զնա գէթ գիշեր մը հիւրընկալել. բայց դուք բազում հարուստներէ լաւ էք ըստ իս. ձեր սեւ չոր հացը թշուառին արտասուօք չէ շաղախուած. ուրեմն գիտցէք թէ ձեր համեստ սեղանն կարի յոյժ ընդունելի է ինձ. յաւիտեան պիտի չմոռնամ ձեր

այս բարիքն . այնչափ յողնած եմ որ յարդեայ անկողին մը՝ մեծափարթամ անձանց գեղեցիկ և փափկազարդ անկողնարաններէ աւելի յարդի պիտի լինի :

Ճաշէն ետքը վառարանի մը շուրջն հաւար- ուելով անցեալ դիպաց վերայ խօսեցան , և երբ հանգստեան ժամն հասաւ , հիւրին համար պատ- րաստուեցաւ խօսէ անկողին մը՝ որոյ վերայ հան- գիտա քնացաւ : Ծերուկն և որդին տեսան որ , ուղեւորն պառկելէ յառաջ , դրամոց սեւ պա- յուսակ մը լաւ մը տեղաւորեց ծոցին մէջ՝ տա- րակուսելով որ մի՛ գուցէ կորսուի . չէր գիտեր թէ՛ կը գտնուի ա՛յնպիսի յարկի մը ներքեւ , ուր առաքինութիւնն արքայութեամբ էր : Կասկածոս մարդը քնանալու տեսնն իսկ ձեռքը միշտ պա- յուսակին վերայ դրած էր , ուժով մը սեղմելով զայն :

Բարի ծերունին հասկցաւ որ մեծարժէք բա- ներ կան պայուսակին մէջ որ ա՛յնքան խնամով կը պահէ . բարեբաղդաբար , ըսաւ ինքնին , շատ ապահով է նա աստ . Աստուած պաշտպաներ է զինքը աւաղակաց ձեռքէն : Ուղեւորն հետեւեալ օրն արթննալուն պէս կը նայի ծոցը որ պայու- սակը մի գուցէ կորուսած լինի : Նախաձաշէն ետքը ուղեւորեցաւ ի քաղաք , շնորհակալութիւն մատուցանելով բարեսէր կողմագործին և նորա որդւոյն : Երբէ՛ք , ըսաւ , այսպիսի հանգիտա քուն քնացած չէի կենացս մէջ : Մեկնելէն յառաջ ոսկի մը տուաւ ծերունւոյն , բայց նա մերժեց

զայն վեհանձնութեամբ և ըսաւ .

— Ես աղքատ մարդ մ'եմ, ես զքեզ հիւրընկալեցի ոչ թէ նիւթական օգտի մը համար, այլ մարդկային պարտականութիւնս կատարելու դիտմամբ . բարիք մը՝ զոր դործեցի, չեմ կարող նիւթականի հետ փոխել . միայն կը խնդրեմ որ բարեկամութիւնդ պահէք միշտ մեզ հետ :

Ուղեւորին ամէն թախանձանքն չկրցաւ ընդունիլ տալ նուէրը : Թուի թէ ըսաւ Փիլիպպոս՝ հօրն, ա՛յն ծրարեալ թուղթերն, որ ա՛յնչափ խրնամով պահեց, մեծ արժէք ունին :

— Անտարակոյս, դրամատոմս են, պատասխանեց հայրն :

— Ի՞նչ է դրամատոմս ըսուածը :

— Թուղթեր՝ որ իբր դրամ յարգի են :

— Ա՛հ, յարեց որդին՝ խոշոր խոշոր բանալով աչքերը, միթէ շա՛տ կարժեն, հայրի՛կ :

— Կայ որ հարիւր ֆրանք, կայ որ տասը հազար ֆրանք կարժէ :

— Եթէ հատ մը ունենայինք, հա՛յր, երջանիկ պիտի լինէինք, ըսաւ Փիլիպպոս, որոյ սիրտը կը փափախէր ի տես այդ թղթոց :

— Զաւա՛կս, հարստութեան մի՛ ցանկանար . հարստութիւնն յաճախ կորստեան պատճառ կը լինի . գոհութիւն տանք Աստուծոյ մեր չքաւորութեան մէջ, և նախանձու ակնարկ չնետենք հարուստներուն վերայ :

— Իրաւունք ունիք, հա՛յր իմ, անցեալ օր քարոզիչն ալ սյդպէս կը խօսէր . ի՛նչ որ ալ լինի

հարստութիւնը, չպիտի ցանկանամ երբէք. թե-  
րեւս այդ փայլուն դրամներն վրդովեն մեր ըն-  
տանեկան խաղաղութիւնն և ապականեն նորա  
սրբութիւնն. ի՛նչ կարժէ եթէ մարդ հոգին ա-  
պականէ ամէն անիրաւութեամբ ստակ գիղելու  
համար. քանի՛ անմիա են նոքա՝ որ օտարն կը  
քանդեն իւրեանց գրպանը լեցնելու համար. քա-  
նի՛ դառն է նոցա վախճանն. այդպիսիք իւրեանց  
դրամոց հետ պիտի կորստին չարաչար:

Հայրը կը սքանչանայ որդւոյն այդ խելացի և  
խմաստալից խօսքերուն վերայ. կը գովէ նորա  
բարի գաղափարներն, համբուրելով սիրուն աչե-  
րըն: Որդւոյն միակ փափաքն էր ազարակ մը ու-  
նենալ, հերկել, ցանել և արդիւնքը վայելել: Ո՛ր  
գիտէ, կըսէր հայրը, կարելի է որ օր մը պոսակ-  
ուի այդ իղձերն: Երբ տղան գնաց ճանապարհ-  
հորդին պառկած անկողինն ժողովել, յանկարծ  
խօտի շիւղերուն մէջ նշմարեց պայուսակն՝ զոր  
ա՛յնքան խնամով պահած էր ճանապարհորդը,  
բայց երթալու ատեն մոռցած էր. տղան առաւ.  
սիրան տրոփել սկսաւ. քաղցր ուրախութիւն մը  
պատեց զինքն. թողուց ամէն բան և վաղեց ճա-  
նապարհին վերայ, որպէս զի տէրը տեսնելով  
յանձնէ:

Իսկոյն նշմարեց ճանապարհորդն՝ որ ախրա-  
գէմ կորոնէր կորուստն. յուսահատեալ կը մը-  
տածէր թէ ի՛նչ ընէ. և ահա Փիլիպպոս կը պօռայ:

— Պարո՛ն, պարո՛ն, ահաւաստիկ պայուսակդ,  
զոր գտայ պառկած տեղէդ. ա՛ռ և վստահ ե-

զիր որ բնաւ չեմ բացած զայն :

— Ո՛վ Աստուած, պօռաց ճանապարհորդն, երկարելով ձեռքերը դէպ ի պայուսակն, զոր իրեն կը մատուցանէր հաւատարիմ տղան .

— Ազնիւ ազայ, ըսաւ, այսօր ինձ կեանք պարգեւեցիր . այս պայուսակը կը պարունակէ մէկ միլիոն ֆրանքի գրամատումս . ամբողջ հարստութիւնս այս է, և վեց որդի ունիմ . այս մեծ գումարին կորուստը նոցա մահուան իսկ պատճառ պիտի լինէր . օրհնեալ լինիս դու, բարի և առաքինի տղա՛յ . ամբողջ ընտանեացս ազատարարըն հանդիսացար :

Զայս ըսելով պայուսակէն կը հանէ 30.000 ֆրանքնոց գրամատումս մը և կը նուիրէ Փիլիպպոսի, որ հիացած կը դիտէ զայն և կը վարանի առնուլ, բայց վերջապէս կը մերժէ զայն՝ ըսելով .

— Պարո՛ն մի՛ աշխատիր, ես մեծ բան մը չըրի, միայն թէ զայն գանելով՝ վերադարձուցի :

Ճանապարհորդը պնդեց որ ընդունի զայն . տղան հրճուանօք դիտեց և առաւ ուրախութեամբ . Ապա հարցուց նմա ճանապարհորդը :

— Բայց ըսէ ինձ, բարեկա՛մդ իմ, ի՞նչպէս չը բացիր զայն, քանի որ գտեր էիր :

— Պարո՛ն, քրիստոնէական վարդապետութիւնը կը պատուիրէ որ ամէն անհատ իւր նմանին իրաւանց պաշտպան լինի, չզրկելով զնա . քանի որ պայուսակը իմն չէր այլ ձերն, ի՛նչ իրաւունք ունէի բանալ զայն և պարունակութիւնը գննել . հայրս կը պատուիրէ թէ աւելի պէտք է յար-

գել ազբատութիւնը քան անիրաւութեամբ ըստացեալ հարստութիւնը :

— Բայց դուք նորա մէջէն գողնալու բնաւ միտում չունեցա՞ք :

— Ո՛չ երբէք . ըսի արդէն թէ՛ անիրաւութիւնը խոտելի է մեզ համար . սպայուսակդ ալ ձեզ , դրամդ ալ . մեք ձեր դրամոց աչք չունինք բընաւ . եթէ ունենայինք՝ զայն ձեզ չէինք վերագարձներ . կը տեսնէք արդէն որ դանեւուս սկէս փութացի ամէն կողմ՝ , դանեւու համար զձեզ որպէս զի յանձնեմ :

Ճանապարհորդն ուրախ զուարթ մեկնեցաւ իսկոյն , և Փիլիպպոս վերադարձաւ խրճիթն :

---

Բ .

Տասն և մէկ տարի վերջը , մի և նոյն ճանապարհորդը կանցնէր նոյն գիւղի մօտէն . բայց այս անգամ գրեթէ բոլորովին փոխուած էր գիւղակըն , զի բազում տարիներ զանազան պաղատու ծառեր հասունցած , նոր կեանք մը առած էր գրեթէ այդ անշուք գիւղն , այնպէս որ մարդ ի զո՛ւր կը խնդրէր այն խոնարհ յարկն՝ որոյ համար պահած էր այնչափ մեծ յիշատակ մը : Գիւղին մօտ մարդագեանի մը վերայ նշմարեց ազարակապետ մը , որ՝ ճամբուն եզերաց վերայ նըստած՝ կը գիտէր ոչխարներն և հովուական սը-

րինգն սուլելով կըզբօսնոյր . դէմքն՝ հանդարտ  
ու ջինջ , որ հոգւոյն մաքրութիւնը կարտայայ-  
տէր : Երկու գեղեցիկ աղայք գառնուկի մը հետ  
կը զուարճանային : Թուի ինձ թէ՛ ըսաւ , ինք-  
նին , աստ էր որ կորուսի պայուսակս . կարծեմ  
թէ այս անատին մօտ էր որ ինձ պատահեցաւ  
փոքրիկն Փիլիպպոս պարկեշտ : Տեղեկութիւն ըս-  
տանալու համար կը մօտենայ երիտասարդ գիւ-  
ղացիին և կըսէ .

— Պարո՛ն , ա՛յն գիւղն է այս , ուր կային ժա-  
մանակաւ բարի ծեր կողովագործ մը և նորա մի-  
ակ որդին :

— Այո՛ , աէ՛ր :

— Շատ փոփոխութիւն կրած է այն օրէն ի  
վեր երբ ես անդ անցուցի գիշեր մը՝ ինքզինքս  
պաշտպանելու համար ցրտէն . կը յիշեմ թէ՛ այդ  
գիւղին մէջ բնակող կողովագործն ունէր որդի մը  
Փիլիպպոս անուն :

— Ես եմ , պարո՛ն , պատասխանեց աղարա-  
կապետը ժպտելով :

Ճանապարհորդը լաւ մը գիտելով զնա՝ ըսաւ .

— Թուի ինձ թէ ձեր դէմքն անծանօթ չէ ինձ :

Ագարակապետը ճանչցաւ զնա և վաղեց գիրկն՝  
գոչելով .

Դո՛ւք էք , պարո՛ն , ա՛յն անձն՝ որ կորուսած  
էիք պայուսակն , և ես գտնելով տուի ձեզ , որոյ  
մէջ կը գտնուէր մէկ միլիոն ֆրանքի դրամա-  
տոմս . հաւաասիկ այս ամէն ծառեր և տունկեր  
ձեր նուէրին շնորհիւ յառաջ եկած են . ուստի

ամէն ժամանակ երբ այս ծառոց հովանւոյն ներքեւ նստիմ, աօթակէզ արեւէն պաշտպանելու համար անձս, երախտագիտութեամբ կը յիշեմ զձեզ :

— Պարկեշտ Փիլիպպոս ըսաւ ճանապարհորդն՝ ուժով մը սեղմելով ագարակապետին ձեռքն, ի սկզբան չճանչցայ զքեզ . տասն և մէկ տարիներ մեծ փոփոխութիւններ գործած են դիմացդ և հասակիդ վերայ . գալով ինձ, ես շատ ծերացած եմ, և չեմ գիտեր թէ՛ ի՞նչպէս կրցաք ճանաչել զիս :

— Սիրտս ուժգնութեամբ կը բարբախէր սիրելի բարերարս, առաջին բռուերէզ գուշակեցի անմիջապէս թէ՛ դու ինքն ես . մանաւանդ ձեր ձայնէն զոր բնաւ չէի մոռցած . չպիտի մոռնամ յաւիտեան ձեր ամենամեծ բարիքն :

— Գուք ոչինչ պարտիք ինձ, պարո՛ն, ես լսկ պարտականութիւն մ'էր որ կատարեցի ձեր բարեաց փոխարէն . ա՛յն դիւցազնութեան քով՝ զոր դու գործեցիր, իմ բրածս ոչինչ է : Ո՞ւր է բարի հայրդ :

— Վեց տարիէ հեռէ զնա կորուսանելու դժբաղդութիւնն ունեցայ, եթէ մետասան ամաց մէջ ունեցայ վիշտ մը, ա՛յն ալ հօրս կորուսան է : Եկէ՛ք սիրելի բարերարս, պէտք է որ ցոյց տամ ձեզ փոքրիկ կալուածներս :

Բռնելով ձեռքէն՝ ամէն սեղ շրջեցոյց . ահա կինս և ահա որդիքս . այսքան բերաններ միշտ կազօթեն կօրհնեն զքեզ, որ իւրեանց երջանկու-



Թեան պատճառ հանդիսացար :

— Լաւ , բայց նոքա չեն գիտեր անունս . ի՞նչ պէս կը յիշեն զիս իրենց աղօթից մէջ :

— Նոքա շատ լաւ կը ճանաչեն զքեզ՝ ճանապարհորդ անուան ներքեւ , և Աստուած որ լսող է ամենայնի , գիտէ թէ՛ ձեզ համար է որ նոքա կը սիրեն աղօթել :

Յետոյ կնոջն ուղղելով խօսքերն՝ ըսաւ . նախ չուզեցի ըսել քեզ , սիրելիս , թէ՛ ս՛րպիսի հիւր կընդունինք այսօր մեր ընտանեկան յարկին ներքեւ . կը տեսնե՞ս այս յարգելի անձն . նա ինքն է որում պարտիմք մեր ճոխութիւնն մեր երջանկութիւնն :

— Ի՞նչ , պարոն , ըսաւ կինը պարզութեամբ , դո՞ւք էք այն ճանապարհորդն՝ որոյ վերայ ա՛յնքան դովեստիւք կը խօսի միշտ ինձ ամուսինս . դո՞ւք էք , կարծեմ՝ որ 30,000 ֆրանքնոց դրամատուն մը տուած էք :

— Այո՛ , սիրելիս , կրկնեց ամուսինը , սա է մեր բարեբարն , առանց անոր կարելի չէր որ այսչափ ստացուածոց տէր լինէինք :

— Պարո՛ն , հաճեցէք ընդունիլ մեր շնորհակալիքն . ուրախ եմ որ զձեզ տեսնելու բարեբաղդութիւնն ունեցայ , չէի յուսար որ օր մը կարենամ անձամբ յայտնել ձեզ անկեղծ երախտատագիտութիւնս :

— Ոչինչ պարտիք մեզ տիկին , ես աւելի երախտապարտ եմ ձեր ամուսնոյն , վասն զի նա ինձ մատոյց անհուն ծառայութիւն մը :

— Որքան ըսէք, բարերա՛րդ մեր, չեմք համոզուիր երբէք. ձեր ըրած բարիքն սարօրինակ և անհուն է. ձեր դիւցադնութեան յիշատակն անջնջելի պիտի լինի մեր սրտից մէջ:

Փիլիպպոս և կինն ա՛յնչափ թախանձեցին որ, ճանապարհորդն երեք օր հիւր մնաց նոցա բով ուրախանալով այն մեծ արդեանց վերայ, որ յառաջ եկած էր իւր բարութեամբն: Այո՛, այդ մէկ նուէրը կազմեց ընտանիք մը, բարդաւածեցոյց գիւղ մը: Երբ շորթորդ օրը բաժանանան հրաժեշտը տալով բաժնուեցաւ, յորդ արտասուք սկսան հոսիլ աչերէն:

Նոքա՛ որք կը հետեւին արդարութեան և ճշմարտութեան, անշուշա այդպիսիք անվարձ չեն մնար երբէք: Ամէն անհատ պարտի իւր նմանին, նոյնպէս և օտարին իրաւունքը պահել: Թո՛ղ չը կարծէ մարդ թէ իւր նմանը զրկելով երջանիկ կը լինի ինքն: Սիրեցէ՛ք արդարութիւնն, և պաշտեցէ՛ք ճշմարտութիւնը: Երկինք կը վարձատրէ ամէն անոնք որք ճշմարտութեամբ, և արդարութեամբ կը շարժին իւրեանց գործսց մէջ: Նոքա կը յաջողին ամէն բարի գործի մէջ: Ինչպէս բարի Փիլիպպոսի առաքինութեան և հաւատարմութեան փոխարէն վարձատրեց զնա Երկինք արժանաւորապէս. երջանկութիւն և անդորրութիւն պարգեւեց, բարի ու առաքինի ամուսին մը շրնորհեց, տուաւ ամէն առատութիւն, օրհնելով զնա և ամբողջ ընտանիքն:

ԱՆՆՈՂՅԵՄՈՒԹԵԱՆ ԶԵՅԵՒԱՆՔՆ

1869ին, Եւրոպիոյ մէջ համեստ ընտանեաց մը յոյժ գեղանի աղջիկը կը յաճախէր վարժարան: Ծնողքն կը յորդորէին զնա՝ արձակուրդէ վերջը առանց ճամբայները դքօսնելու վերադառնայ ի տուն, բայց ամէն յորդորք անլսելի կը մնային:

— Մարիամ դեռ չվերադարձա՞ւ հարցուց մայրըն՝ որդւոյն:

— Ո՛չ, պատասխանեց, մութը կը կոխէ, բայց դեռ չերեւիր նա:

— Խելքս չհասնիր, կը յարէ մայրն, ա՛յսչափ ուշ մնացած չէր, ս՞էր է արդեօք:

— Ո՛հ, Աստուած իմ կը գոչէր հայրը, երանի՛ թէ բան մը պատահած չլինի:

Մայրը շարունակ կը վազէր պատուհանն, և ամէն կողմէ ուշի ուշով կը դիտէր թէ արդեօք կրնա՞յ տեսնել աղջիկն, բայց ի դուր, արտասուաց հեղեղ կը հոսէր ընտանեկան յարկին մէջ այդ երեկոյ, վասն զի իւրեանց երջանկութիւնն ու ուրախութիւնը բազմապատկողը չէր նշմարուէր:

Յաջորդ օրը, եղբայրն առանց ժամանակ անցընելու փութացաւ ի վարժարան՝ քրոջը վերայ տեղեկութիւն ստանալու համար:

— Տիկի՛ն, կըսէ վարժուհւոյն, կը հաճի՞ք ըսել թէ ի՞նչ եղած է մեր քոյրն:

— Ի՞նչ է ձեր քրոջ անունն :

— Մարիամ :

— Սա՛ միայն գիտեմ որ երբ յանդիմանեցի զնա իւր մէկ յանցանաց համար, տեսայ որ միջօրէին, չեմ գիտեր՝ ի՞նչ միջոցով դուրս ելեր է, և չվերագարձաւ :

Կրէկուար (եղբայրն) տուն կը վերագառնայ, և եղելութիւնը կը հաղորդէ մօրն :

— Գեռ աղջիկս երևան չելա՛ւ, կը դռչէ մայրն այլ յայմէ և լալագին, ի՞նչ պիտի ընեմ, ո՛հ, ի՞նչ գժբազդ ճակատագիր ունիմ ո՛վ Աստուած :

— Կրէկուար, ըսաւ մայրը, խորհուրդ մը տուր ինձ. ի՞նչպէս կրնանք գտնել զնա, ո՞ւր երթանք և ո՞ւր փնտռենք :

Խեղճ աղան չէր գիտեր թէ ի՞նչ պատասխան տայ, բայց միջոց մը կը փնտռէր ամօքելու համար մօրը ցաւերը :

— Ի՞նչ կուզէք որ ըսեմ, մա՛յր պատասխանեց Կրէկուար, ձեռքէս եկածին չափ միշտ կաշխատիմ, բայց գժբազդաբար չեմ կրնար գտնել. կեանքս պիտի զոհեմ, միայն թէ գժբազդութիւն մը պատահած չլինի քրոջս :

— Գժբազդութիւն մը... ըսաւ մայրը սոսկմամբ :

— Այո՛, գժբազդութիւն մը. ո՛վ թիտէ թէ ո՛ւր է նա. ո՛վ գիտէ թէ որո՞յ ձեռք ինկած է : Բայց եթէ փոքրիկ բան մը պատահած է, վա՛յ այն մարդուն, որոյ ձեռքը եղած է այդ վնաս՝ մ՞ սիրելի քրոջ :

— Մարիամն, սիրելի աղջիկս, կողբայր թըշուառ մայրն, և կարտասուէր դառնապէս :

Հայրը կը կարծէր թէ աղջիկն ազգականաց միոյն տունը գնացած է, բայց երբ հետեւեալ օրը դարձեալ չգտաւ, սկսաւ շուարիլ վշտանալ :

— Ո՞ւր է աղջիկս, ո՛հ, սիրելի Մարիամն, աղջիկս :

— Մի՛ այդչափ չարչարուիք, մայր իմ, ըսաւ կրէկուար բռնելով մօրը ձեռքէն, վատահ եղէ՛ք որ ամէն տեղ պիտի փնտռեմ մինչեւ որ գտնեմ զնա :


— Այո՛, ըսաւ, հէգ մայրը, դուն պիտի գտնես զնա, վասն զի եղբայրն ես և պարտականութիւնդ է աշխատիլ նորա համար :

— Ե՛կ, կրէկուար, ըսաւ հայրը, երթանք փընարուել զնա :

Ամէն խուզարկութիւնք ապարդիւն կը մնան : Կերթան կիմացնեն սատիկանութեան, սատիկանապետը կը յանդիմանէ ըսելով թէ այդչափ դեղանի և անչափահաս օրիորդ մը ի՞նչպէս կը հեռացնէք ձեր քովէն, և ինչո՞ւ չէք ընել պէտք եղած հսկողութիւնը :

Անցան բազում օրեր և Մարիամ դեռ յերեւան չելաւ : Ոստիկանութեան խիստ խուզարկութիւնք ալ չյաջողեցան գտնել նորա հետքը : Վերջապէս կորսուած էր անխոհեմ աղջիկն ի սուգ համակեցաւ բոլոր տունն : Կարելի չէր մխիթարել նորա ծնողքն ու եղբայրն : Ամէն ըսողները կը ցաւէին, բայց միանգամայն կը մեղադրէին որ

առանց կարեւոր հսկողութեան թողած են զնա, և կորսնցնելէ ետքը կողքան կարտասուեն ի զուր: Թո՛ղ այդ դէպքը առ հասարակ ծնողաց զգուշութեան խրատ ու խթան լինի, կըսէին, և շատ իրաւամբ:



### ԹՇՈՒԱԹՈՒԹԵԱՆ ՁՈՂԵՐԸ

Իրլանտիոյ մէջ ժամանակաւ կար թշուառ ընտանիք մը: Այրը մեռնելով իբր թանկագին ժառանգութիւն թողած էր ամուսնոյն՝ երկու անջափահաս դուստր, մին՝ երեք, և միւսն՝ հինգ տարեկան: Այրին մեծ նեղութեամբ կրցաւ անցընել երկու տարի. անտանելի աշխատութեամբ հայթայթեց սրբոցն սնունդն՝ որ մնասակար և անբաւական էր: Խեղճն ինկաւ քիչ ժամանակ ետքը ցաւոց անկողնոյն մէջ, և անգամ մ'ա՛լ չկրցաւ ելնել: Մեռաւ թողլով յաշխարհի իւր սիրասուն զաւակները:

Թշուառութիւնն ա՛յն աստիճան տիրած էր հասարակութեան մէջ, որ ոչ ոք կարող էր յօգնութիւն հասնիլ նոցա: Սոսկալի սով մը ճարակած էր ամէն կողմ: Բազում ընտանիքներ կը լսէին նոյն իսկ իւրեանց զաւակաց նօթութեան աղիողորմ աղաղակներն: Եթէ մէկը կարենար զաւակներն հետ տանիլ ի Քիլպիւրըն, կը հա-

մարուէր թէ մեծ գործ մը ըրած է . քանզի բազումք լքանելով իւրեանց զաւակներն՝ կը փախչէին սովին ձեռքէն : Որովհետեւ ժողովուրդը կը յուսար որ կրնայ անդ պարէն գտնել , ուստի ամէնքն կը վազէին անդր :

Սայլորդ մը որ Քիւպիւրընի մօտ տեղ մը կերթար , տեսնելով սոյն որբուհիները , կը գթայ , և մտածելով որ եթէ թողու անդ , թերեւս անօթի մեռնին , կը դնէ երկու փոքրիկ աղջիկները սայլին մէջ . Լիցցի եօթը տարեկան եղած էր այն ատեն , և Մարի՝ հինգ : Խեղճ տղայքն լաւ մը տեղաւորուեցան սայլին մէջ՝ մին միւսին քով : Երբ կառքն հասաւ անդր , ուր պէտք էր փոխել ճամբան , մարդը վար առաւ զանոնք կառքէն , և ցոյց տուաւ երթալիք ճամբանին : Տղայքն լալագին տալով բաժանման հրաժեշտ իւրեանց բարերարին , մեկնեցան :

Լիցցի բռնեց փոքրիկ քրոջը ձեռքէն որ նըստած էր խոտին վերայ , և ըսաւ անոր .

— Ե՛լ , Մառի , պէտք է մեզ մեկնիլ , եթէ կուզենք անյապաղ հասնիլ ի Քիւպիւրն , եթէ մնանք ճամբաներն՝ կարելի է որ վնաս մը կը հասնի մեզ :

— Շատ նօթի եմ , ըսաւ Մառի , ամբողջ օրը բան մը կերած չեմ :

Շատ տկար էին որբուհիներն . ուստի քալելու մեծ գծուարութիւն կը կրէին : Այդ անմեղ էակները ձեռք ձեռքի տուած , իւրեանց անզօր սրունքներուն վերայ դողդոջելով երբ բաւական

անդ յառաջացան Լիցցի նշմարեց ի հեռուստ  
աուն մը . և ցոյց տուաւ քրոջը . բայց խեղճերը  
գեռ քառորդ ժամու ճամբայ ունէին ագարակն  
հասնելու համար : Երբ հասան անդը վարանեցան  
ներս մանել , զի երբէք չէին մուրացած իւրեանց  
թշուառութեան հակառակ : Այն ինչ մօտեցած  
էին տանը , ահա՛ յանկարծ լսեցին ագարակապե-  
տին ձայնն որ կը պօռար , սաստիկ յանդիմանե-  
լով իւր մարդիկը . յետոյ մտաւ տանը մէջ և  
ուժգին գոցեց դուռն , դնաց նստաւ պատուհա-  
նին առջեւ և կը շարունակէր յանդիմանութիւն-  
ները : Տղայքն ստակացին երբ այդ գոռում գոչու-  
մը լսեցին . ստիպուեցան ապասել մինչեւ որ ա-  
գարակապետի բարկութիւնն իջնելով՝ լռեց :  
Լիցցի բացաւ դուռն , և երկուքը ներս մտան :  
Ագարակապետը նստած էր թիկնաթոռի մը վե-  
րայ կրակին մօտ :

— Լաւ ուրեմն , ի՞նչ կուզէք տղայոց հարցուց  
գոռողութեամբ , որք խիստ վախցան և չկարո-  
ղացան բառ մ'անգամ արտատանել և պատմել  
իւրեանց թշուառութիւնը :

— Չէ՞ք կրնար խօսիլ , ըսաւ նա կատաղու-  
թեամբ :

Լիցցի սակաւ մի համարձակելով՝ պատասխա-  
նեց վերջապէս շատ քաղցրութեամբ .

— Ո՛հ , եթէ հաճիք մեզ կտոր մը հաց տալ  
կամ քիչ մը գետնախնձոր , հաւատացէ՛ք թէ մեծ  
բարիք մը ըրած պիտի լինիք :

— Ես ալ ատոր վերայ կը խորհէի արդէն , դո-



զանչեց ագարակապետը , ապահով էի թէ՛ դուք մուրացիկներ էք , բայց այս տեղի մուրացիկներէն չէք :

— Ի՞նչ վնաս , կը յարէ աղայոց մին . թո՛ղ օտար լինինք . դուք ձեր փոքրիկ լումայն տուէք , ահա՛ պատառ մը հաց չունինք որ անօթութիւննիս փոքր մի անցնի :

— Կորսուեցէ՛ք , անպիտաններ՛ր ի՞նչ բան ունիք աստ :

Երկու թշուառ որբուհիք սկսան արտասուել :

Ի՞նչ փոյթ ինձ ձեր անօթութիւնն , ա՛յդ ինձ չվերաբերիր . թո՛ղ ձեր ծնողք անուցանեն զձեզ , բայց որովհետեւ նոքա վարժուած են ծուլութեան , ուստի միշտ անհող կը գանուին զձեզ խնամելու համար , թո՛ղ պարկեշտ աշխատութիւն մը ընտրեն , որպէս զի կարենան հայթայթել ի՛նչ որ պէտք է , և զձեզ ալ այլոց գոները չձգեն :

— Մեր հայրն ու մայրը մեռած են պատասխանեց Լիցցի :

— Գիտեմ , ըսաւ ագարակապետը , ձեր ծնողքերը զձեզ մուրալ զրկեն , կը պատուիրեն որ այդպէս ըսէք միշտ , որպէս զի կարենաք այլոց գութը ձեր վերայ հրաւիրել և բան մը կորզել նոցա ձեռքէն . կորսուեցէ՛ք :

— Ամբողջ օրը հացի փշուր մը խակ մեր բերանը չեմք գրած , պատասխանեց Լիցցի , ա՛յնչպիսի յոգնած եմք , որ չեմք կարող այլ եւս շարժիլ . շնորհ ըրէք քիչ մը հաց , շատ անօթի եմք :

—Ըսի ձեզ թէ բան մը պիտի չտամ:

Խեղճերն որչափ որ ազաչեցին, չկրցաւ անգութ սիրտը շարժիլ: Ազարակապետն ելաւ և սպառնալից դէմքով աչերը տղայոց տնկեց: Լիցցի դէպ ի դուռը դիմեց, կամաց մը ներս մտաւ և յառաջացան դէպ ի բակը, ուր բան մը չկրցան գտնել. յանկարծ փոքրիկն Մառի անկեան մը մէջ նշմարեց շունն, որոյ աչերէն կրակ կը ցայտէին. կենդանւոյն առաջ կը գտնուէր փայտեայ պնակ մը, որոյ մէջ կային ապուր և քանի մը հացի պատառ. խեղճ փոքրիկն իրկնցուց ձեռքը պատառ մը հաց կորզելու համար պնակին մէջէն: Եւ եթէ այդ միջոցին ալ չգիմէին տարաբազդ մանկունք, թերեւս ի մահ մատնուէին:

Շունն՝ որ մինչեւ այն ատեն ընկեր եղած չէր գրեթէ և ոչ մէկու մը հետ, զարմանալով դիտեց խեղճերն և թոյլ տուաւ որ իրեն հետ ուտեն: Անսիրտ մարդերէն լաւ է եղեր կենդանին որ գթաց թշուառներուն վերայ, կարծես՝ յանդիմանել ուզելով անգութ ազարակապետը: Մի և նոյն վայրկեանին ազարակապետը գնաց բակը տեսնել թէ՛ տղայք գնացե՞ր են, թէ՛ ոչ. բայց մեծ եղաւ զարմանքը՝ տեսնելով որ նոքա շան հետ կը ճաչեն: Այնչափ կատաղի էր որ ծառայքըն իսկ կը վախնային մօտենալ, Ազարակապետն յապուշ կրթած էր, և կը վախնար որ վնաս մը պատահած չլինի անմեղներուն: Վազեց նոցա քով և բարկութեամբ պօռաց:

—Շունը չէ՞ք տեսներ, պիտի յօշատէ զձեզ:

Բայց հիացաւ, երբ տեսաւ որ՝ կենդանին, մլասա մը հասցնելու փոխան՝ կը գզուէ զանոնք: Շունն՝ ի տես իւր տիրոջ՝ վազեց ընդ առաջ նորա, իբր թէ ըսելու համար:

— Մի՛ արտաքսէք հիւրերս .

Այս տեսարանին վերայ՝ մարդուն միտքը փոխուեցաւ և այս սրտառուչ տեսարանն մեծապէս յուզեց անգութ մարդուն սիրտը: Տղայք տեսնելով զազարակապետը, շատ վախցան որ մի՛ գուցէ պատժուին տիրոջմէն, զի կենդանւոյն կերակուրը բաժնած էին իրենց մէջ: Մի քանի վայրկեան լռութենէ վերջը՝ ազարակապետը ըսաւ .

— Ձեր անօթութիւնն արդարեւ այդչափ մեծ էր որ չգարչեցաք ճաշել շան հետ . եկէ՛ք, կերէ՛ք ձեզ համար պատրաստուած կերակուրներն՝ որչափ որ կրնաք՝ մինչեւ որ կշտանաք: Զայս ըսելով բռնեց տղայոց ձեռներէն և տարաւ իւր սենեակը: Շունն էր որ ամչցուցած էր իւր աէրն: Ազարակապետը նստոյց զանոնք ի սեղան, և ինքն ալ նոցա քով նստած՝ քաղաքավարութեամբ ու ազնուութեամբ հարցուց նոցա անուններն:

— Մնունս Լիցցի է, ըսաւ անդրանիկ աղջիկն, և ցոյց տարով փոքրիկ քոյրն՝ սա ալ կրտսեր քոյրս է, որ Մառի կը կոչուի, յարեց:

— Երկար ատեն կա՞յ որ ձեր ծնողքն մեռած է:

— Հայրս մեռած է երկու ասրիէ ի վեր, բայց մայրս անցեալ եօթնեկի մէջ մեռաւ: Զայս ըսելով սկսան արտասուել:

Ո՛հ, դժխեմ՝ բաղդին ձեռք խաղալիք դար-

ձած էին անմեղները . աշխարհի հաճոյքները գեռ-  
բնաւ չվայելած՝ տառապանաց ճիրաններուն մատ-  
նուեցան : Ի մի բան՝ թշուառութեան զոհերն է-  
ին հէք մանկունք :

— Զաւակներ' րս , մի' արտասուէք , ըսաւ ագա-  
րակապետն , Աստուած պիտի խնամէ զձեզ , զի  
նա ձեզ նման որբոց պաշտպանն է : Ըսէ՛ք ինձ ,  
ուստի՞ կուգար :

— Լօնքրէյէ :

— Լօնքրէ՛յէ , ըսաւ ագարակապետը զար-  
մանօք , Լօնքրէ՛յէ , տարօրինակ բան է այս :

Կասկածը աիրեց մարդուն վերայ , զի անհա-  
ւատալի կ'երեւէր իրեն . կըսէր ինքնին թէ՛ ի՞նչ-  
պէս այդչափ հեռաւորութենէ կրցեր են դալ ա-  
ռանց վտանգի մը պատահելու : Ուստի մեծ վա-  
րանմամբ հարցուց :

— Ձեր հօր անունն ի՞նչ էր :

— Մարդէն Սիւլիվան , պատասխանեց Լիցցի :

— Ի՞նչ , Մարդէն Սիւլիվան . դոչեց ցափե-  
լով աթոռէն , և ա՛յնպիսի սուր ակնարկ մը նե-  
տեց մանկանց վերայ որ վախցան խեղճերը : Դէմ-  
քը բոլորովին կարմրեցաւ և աչքերէն դառն և  
կիզիչ արտասուք սկսան հոսիլ . հառաչեց՝ փոք-  
րիկ աղջիկն բռնելով բազկացը մէջ , սեղմեց զնա  
կուրծքին վերայ և արտասուօք ողջագուրեց :  
Մի և նոյնն ըրաւ նաև անդրանիկ աղջկան , որ՝  
նչպէս ըսինք հազիւ եօթը տարեկան հասակին  
մէջ էր : Վերջապէս իւրաքանչիւրին ճակատին մի  
քանի սիրակէզ համբոյրներ ձօնելէ վերջը նստաւ  
և ըսաւ .

— Կը ճանչնա՞ք զիս, տղայքներս :

— Ո՛չ, պատասխանեց Լիցցի :

Ի՞նչպէս եղաւ որ եկաք այսր. մէ՞կը զրկեց զձեզ :

Ոչ ոք. Գիլպիւրըն պիտի երթայինք, ուր կը բնակի մեր հօր մէկ եղբայրն, և ըսին որ եթէ երթանք՝ շատ քաղաքավարութեամբ պիտի ընդունուինք : Թէպէտ և չհաւատացի, վասն զի մեր մայրը միշտ կըսէր մեզ որ ձեր հօրեղբայրն կարծրասիրտ մարդ մ'է. ազգական է, բայց բնաւ չը յիշեր զմեզ :

Ձեր մայրն ի՞նչ որ ըսէր, իրաւունք ունէր. սակայն ի՞նչ պիտի ընէք այդչափ կարծր սիրտ ունեցող մարդու մը քով. ուրեմն չպիտի ընդունի զՁեզ :

— Անօթի պիտի մեռցնէր զմեզ, ըսաւ Լիցցի :

— Ո՛չ, ո՛չ, պօռաց ագարակապեան, երբէք չպիտի ըլլայ այդպէս, երբէք : Սրբեցէք ուրեմն ձեր արտասուքն, զաւակներս, Աստուած անշուշտ պիտի գթայ ձեր վերայ. պիտի քաղցրացնէ կակղացնէ ձեր հօրեղբօր սիրան, որով նա ալ չպիտի մերժէ զձեզ երբէք : Ագարակապետը տղայոց զարմանքը տեսնելով շարունակեց,

— Պիտի երթայք ի Գիլպիւրըն Բաղրիք Սիւլիվանի տունն, և այդ ալ նոյն խոկ խմն է. ես եմ՝ ձեր հօրեղբայրն և այժմ գիտցայ որ Մարդէն եղբօրս զաւակներն էք : Տարաբախտ մանկունք սըրբեցին արտասունքնին, և խոկոյն ուրախութեան ժպիտ մը փայլեցաւ նոցա ճակատուց վերայ : Գը-

րեթէ հազիւ տարի մը կար որ Բաղրիք Սիւլի-  
վան այն ազարակն առած էր :

Նախախնամութիւնն այս անմեղ մանկանց  
գողղոջուն քայլերն դիտմամբ ուղղած էր դէպ ի  
այդ մարդն , որ նոցա հօրեղբայրն էր , սակայն  
այդչափ երկայն ժամանակներէ ի վեր մոռացու-  
թեան քօղին տակ ծածկած էր նոցա անուններն  
խկ՝եթէ շունն այդ օրինակը չտար ազարակա-  
պեաին , ո՛ր գիտէ՝ ինչ պիտի լինէին խեղճ որ-  
բուհիքն . բայց այն Աստուածն՝ որ հայր է ընդ-  
հանուր մարդկութեան , նորա մէջ գտնուող ու  
ապրող այսպիսի խեղճերը չքաներ երբէք



2015









